



ISSN 0366-5119

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ
BIOLOGICAL JOURNAL OF ARMENIA

2017

Լույս է տեսնում 1948 թվականից, հոդվածները հրատարակվում են հայերեն,
ռուսերեն կամ անգլերեն լեզուներով

Выходит с 1948 года, статьи публикуются на армянском, русском
или английском языках

Journal is published since 1948, the articles are published in Armenian,
Russian or English

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Է.Ս. Գևորգյան (*գլխավոր խմբագիր*), Ռ.Մ. Հարությունյան (*գլխավոր խմբագրի տեղակալ*), Ա.Հ. Եսայան (*պատասխանատու քարտուղար*), Գ.Գ. Գևորգյան, Ա.Հ. Թռչունյան, Լ.Ռ. Մանվելյան, Ս.Խ. Մայրապետյան, Ժ.Հ. Վարդանյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յու.Թ. Ալեքսանյան, Մ.Ա. Դավթյան, Ջ.Ի. Հակոբյան, Վ.Պ. Հակոբյան,
Ս.Հ. Մովսիսյան, Գ.Հ. Փանոսյան, Լ.Լ. Օսիպյան

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Յ.Ս. Գևորգյան (*главный редактор*), Ռ.Մ. Արությունյան (*заместитель главного редактора*), Ա.Գ. Եսայան (*ответственный секретарь*), Գ. Գ. Գևորգյան, Ա.Ա. Թրչունյան, Լ.Ր. Մանվելյան, Ս.Խ. Մայրապետյան, Ջ.Ա. Վարդանյան

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Ю.Т. Алексанян, М.А. Давтян, Ж.И. Акопян, В.П. Акопян,
С.О. Мовсесян, Г.А. Паносян, Л.Л. Осипян

THE EDITORIAL BOARD

Editor in chief: E.S. Gevorgyan, *Vice-editor:* R.M. Aroutiunian
Secretary-in-charge: A.H. Yesayan, *Members of the Board:* G.G. Gevorgyan,
A.H. Trchounian, L.R. Manvelyan, S.Kh. Mayrapetyan, Zh.H. Vardanyan.

THE EDITORIAL COUNCIL

Yu.T. Aleksanyan, M.A. Davtyan, Zh.I. Hakobyan, V.P. Hakobyan,
S.H. Movsesyan, G.H. Panosyan, L.L. Osipyan

• Փորձարարական և տեսական հոդվածներ •

Սարգսյան Գ.Թ., Հակոբյան Ն.Է., Կարապետյան Լ.Մ. Հոգեներգործի (դիագնոստիկ) ազդեցության գնահատումն առնետների սեռից կախված վարքային դրսևորումների վրա.....	6
Ղալաջյան Լ.Մ., Ալեքսանյան Զ.Ս., Թադևոսյան Ա.Յ., Թովմասյան Ա.Յ., Ստեփանյան Բ.Թ., Գասպարյան Թ.Ս. Արհեստական ռադիոնուկլիդների կուտակումը գանգուր կաղամբում հիդրոպոնիկական տարբեր համակարգերի և հողի պայմաններում.....	10
Հովհաննիսյան Մ.Կ. Հուլիսի և ֆելկի ցեղերի երրորդ ծնի կովերի արտակազմվածքի առանձնահատկությունները, կապը կաթնային մթերատվության հետ.....	14
Ասատրյան Ա.Լ., Արծրունի Ի.Գ., Մատինյան Կ.Ս., Գևորգյան Է.Ս. Ցիսպլատինի և հիդրոկորտիզոնի համատեղ ներգործությունը առնետի քրոմատինի փաթեթավորման վրա.....	20
Օգանեզովա Գ.Յ., Գրիգորյան Մ.Մ. Կեռու լացող ձկնի անատոմիական առանձնահատկությունները.....	26
Կորեյան Յ.Յ. Հրազդան գետի ջրի որակի գնահատումն ըստ մանրէաբանական ցուցանիշների.....	35
Գրիգորյան Ա.Վ., Կարապետյան Ա.Ֆ., Զիվանյան Կ.Ա. Հրազդան գետի ջրերի աղտոտվածության կլաստոգեն ազդեցության բացահայտումը լճագորտի (<i>Pelophylax ridibundus</i>) ծայրամասային արյան էրիթրոցիտների ուսումնասիրության միջոցով.....	39
Գյոնջյան Ա.Ա., Մանասերյան Ն.Յ., Բազդյան Յ.Վ. Հնագույն Շիրակի դամբարաններից հայտնաբերված կենդանիների ոսկորները (2008-2015 թթ. պեղումներ).....	44
Մամյան Ա.Ս., Գևորգյան Գ.Ա. Դեբեդ գետի ջրահավաք ավազների հանքարդյունաբերական և ոչ հանքարդյունաբերական տարածքների գետային ֆիտոպլանկտոնի համեմատական ուսումնասիրություն.....	50
Մարգարյան Ա.Ա. Հայաստանի հանքարդյունաբերական տարածքներում բակտերիաների համակենցության ՊՇՈ-ԴԳԺ մատնահետքերի եղանակով, ուսումնասիրությունը.....	56
Բոշյան Տ.Վ. Գավառագետ և Ջկնագետ գետերի մակրոանոդաշարների համակենցության սեզոնային զարգացման առանձնահատկությունները և ջրի որակը.....	63
Պետրոսյան Ա.Ա., Սահակյան Վ.Ս. Դենդրոփրոնոլոգիական մեթոդների կիրառումը դատական փորձաքննության մեջ.....	68
Ստեփանյան-Ղանդիլյան Ն.Պ. Հայաստանի վայրած նոնենու (<i>Punica granatum</i> L.) կարիոլոգիական ուսումնասիրությունը.....	74
Մարգարյան Գ. Գ. Կոկոռնենու և հաղարջենու մշակովի տեսակների սնկային հիվանդությունների ուսումնասիրությունն Արցախում.....	79
Բարխուդարյան Վ.Գ., Անանյան Գ.Վ. Մեզո-տետրա-(4N-ալիլպիրիդիլ) պորֆիրինի և Նրա Cu, Co և Zn պարունակող ածանցյալների փոխազդեցությունը ԴՆԹ-ի հետ.....	84
Հովսեփյան Ա.Ա. Սևանա լճի ֆիտոպլանկտոնի զարգացման առանձնահատկությունները 2015 թ.	94
Մամյան Ա.Ս., Համբարյան Լ.Ռ., Խաչիկյան Թ.Գ., Ստեփանյան Լ.Գ. Սևանա լճի ֆիտոպլանկտոնի հորիզոնական բաշխվածության նկարագիրը 2016թ.	101
Սայաթյան Յ.Յ., Ավետիսյան Գ.Դ., Վարդանյան Է.Ա. Տավուշի մարզի անտառային լանդշաֆտների կառավարման բարելավման խնդիրները.....	108

•Համառոտ հաղորդումներ•

Մարմարյան Գ.Յու. Պրոֆեսոր Ռ.Գ. Զամալյանի 80-ամյակի առթիվ.....	112
---	-----

СОДЕРЖАНИЕ

•Экспериментальные и теоретические статьи•

<i>Саркисов Г.Т., Акопян Н.Э., Карапетян Л.М.</i> Оценка влияния транквилизатора (диазепам) на поведенческие проявления в зависимости от пола крыс.....	6
<i>Калачян Л.М., Алексанян Дж.С., Тадевосян А.О., Товмасын А.О., Степанян Б.Т., Гаспарян Т.С.</i> Накопление искусственных радионуклидов в кудрявой капусте в условиях различной гидропонической системы и почвы.....	10
<i>Оганнисян М.К.</i> Особенности экстерьера коров третьего отела пород Гольштейн и Флекви, связь с молочной продуктивностью.....	14
<i>Асатрян А.Л., Арируни И.Г., Матинян К.С., Геворкян Э.С.</i> Влияние совместного введения цисплатина и гидрокортизона на степень конденсации хроматина печени крыс.....	20
<i>Оганезова Г.Г., Григорян М.М.</i> Анатомические особенности плакучей формы березы.....	26
<i>Кобелян Р.О.</i> Оценка качества воды реки Раздан по микробиологическим показателям.....	35
<i>Григорян А.В., Карапетян А.Ф., Дживанян К.А.</i> Выявление кластогенного воздействия вод реки Раздан на эритроциты периферической крови озерной лягушки <i>Pelophylax ridibundus</i>	39
<i>Генджян А.А., Манасерян Н.У., Багоян А.В.</i> Кости животных из погребений древнего Ширака (раскопки 2008-2015 гг.).....	44
<i>Мамян А.С., Геворкян Г.А.</i> Сравнительное исследование речного фитопланктона горнодобывающих и негорнодобывающих территорий, водосборного бассейна реки Дебед.....	50
<i>Маргарян А.А.</i> Структура бактериального сообщества различных терророрий рудных пород Армении, выявленная ПЦР-ДГГЭ фингерпринтом.....	56
<i>Бошян Т.В.</i> Особенности сезонной динамики и качество воды макробеспозвоночных рек Гаварагет и Дзкнагет.....	63
<i>Петросян А.А., Саакян В.С.</i> Дендрохронологические методы в судебной экспертизе.....	68
<i>Степанян-Гандилян Н.П.</i> Кариологическое изучение дикорастущего граната Армении (<i>Punica granatum</i> L.).....	74
<i>Маргарян Г.Г.</i> Исследование грибных заболеваний культивируемых видов крыжовника и смородины в Арцахе.....	79
<i>Бархударян В.Г., Ананян Г.В.</i> Взаимодействие мезо-тетра- (4N-аллилпиридил) порфирина и его Cu-, Co- и Zn-содержащих производных с ДНК.....	84
<i>Овсеян А.А.</i> Особенности развития фитопланктона озера Севан в 2015 г.	94
<i>Мамян А.С., Гамбарян Л.Р., Хачикян Т.Г., Степанян Л.Г.</i> Характеристика горизонтального распределения фитопланктона озера Севан в 2016 году.....	101
<i>Саядян О.Я., Аветисян Г.Д., Варданян Е.А.</i> Проблемы улучшения управления лесных ландшафтов Тавушского региона.....	108

•Краткие сообщения•

<i>Мармарян Г.Ю.</i> К 80-летию профессора Р.Г. Камаляна	112
--	-----

CONTENTS

•Experimental and theoretical articles•

<i>Sargisov G.T., Hakobyan N.E., Karapetyan L.M.</i> Assessment of Tranquilizers' (diazepam) effect on behavioral manifestations of rats depending on sex.....	6
<i>Ghalachyan L.M., Alexanyan J.S., Tadevosyan A.H., Tovmasyan A.H., Stepanyan B.T., Gasparyan T.S.</i> Accumulation of artificial radionuclides in kale in the conditions of different hydroponic systems and soil.....	10
<i>Hovhannisyan M.K.</i> Characteristic traits of the external stature of the third-calf cows of Holstein and Flekvy breed and their relation to milk productivity.....	14
<i>Asatryan A.L., Artsruni I.G., Matinyan K.S., Gevorgyan E.S.</i> The effect of cisplatin and hydrocortisone co-administration on rat liver chromatin condensation.....	20
<i>Oganezova G.H., Grigoryan M.M.</i> The anatomical peculiarities of weeping form of birch.....	26
<i>Kobelyan H.H.</i> Assessment of the water quality of the River Hrazdan by microbiological indicators.....	35
<i>Grigoryan A.V., Karapetyan A.F., Jivanyan K.A.</i> The identification of clastogenic impacts of water in Hrazdan river by studying the peripheral blood erythrocytes of lake frog (<i>Pelophylax ridibundus</i>)	39
<i>Gyonjyan A.A., Manaseryan N.H., Bagoyan H.V.</i> Animal bones from the burials of ancient Shirak (excavations from 2004-2015)	44
<i>Mamyan A.S., Gevorgyan G.A.</i> Comparative investigation of the river phytoplankton of the Debed river catchment basin's mining and non-mining areas.....	50
<i>Margaryan A.A.</i> Bacterial community structure of Armenian mining territories revealed by PCR-DGGE fingerprinting.....	56
<i>Boshyan T.V.</i> Water quality and seasonal development features of macroinvertebrates in Gavaraget and Dzknaget rivers.....	63
<i>Petrosyan A.A., Sahakyan V.S.</i> Dendrochronological methods in forensic examination.....	68
<i>Stepanyan-Gandilyan N.P.</i> Caryological studies of Armenian wild pomegranate (<i>Punica granatum</i> L.)	74
<i>Margaryan G.G.</i> Currant and gooseberry fungal diseases's study in Artsakh.....	79
<i>Barkhudaryan V.G., Ananyan, G.V.</i> Interaction of Meso-tetra-(4N-allylpyridyl) porphyrin and its Cu-, Co- and Zn- containing derivatives with DNA	84
<i>Hovsepyan A.A.</i> Features of phytoplankton development of lake Sevan in 2015.....	94
<i>Mamyan A.S., Hambaryan L.R., Khachikyan T.G., Stepanyan L.G.</i> Description of the horizontal distribution of phytoplankton of Lake Sevan in 2016.....	101
<i>Sayadyan H.Y., Avetisyan G.D., Vardanyan E.A.</i> Issues related to the improvement of forest landscape management in Tavush region.....	108

•Short communication•

<i>Marmaryan G.Yu.</i> In the honour of professor R.G. Kamalyan's 80 th anniversary	112
--	-----



Биолог. журн. Армении, 4 (69), 2017

ОЦЕНКА ВЛИЯНИЯ ТРАНКВИЛИЗАТОРА (ДИАЗЕПАМ) НА ПОВЕДЕНЧЕСКИЕ ПРОЯВЛЕНИЯ В ЗАВИСИМОСТИ ОТ ПОЛА КРЫС

Г.Т.САРКИСОВ, Н.Э.АКОПЯН, Л.М.КАРАПЕТЯН

Научный центр зоологии и гидроэкологии НАН РА,
лаборатория физиологии поведения животных
sarkgagik@graffiti.net

Исследовались различия в поведении самцов и самок нелинейных крыс в условиях свободного выбора новизны при введении животным диазепама в дневное время. Обнаружен анксиогенный эффект используемого транквилизатора, выражающийся в снижении числа выглядываний из “укрытия”, уменьшении времени пребывания животных в открытом пространстве. Анксиогенный эффект был более выражен у самцов, чем у самок.

Крысы – половые различия – диазепам – исследовательское поведение

Ուսումնասիրվել են արու և էգ ոչ գծային առնետների վարքագծային տարբերությունները, կենդանիներին ցերեկային ժամերին դիագնոստիկ ներարկված նորոյթի ազատ ընտրության պայմաններում: Հայտնաբերվել է կիրառվող հոգեներգործի տազնապածին էֆեկտ, որը դրսևորվում է «թաքստոցից» դուրս նայելու դեպքերի թվի նվազմամբ, կենդանիների բաց տարածությունում գտնվելու ժամանակի կրճատմամբ: Տազնապածին էֆեկտը ավելի շատ դրսևորվել է արուների, քան էգերի մոտ:

Առնետներ – սեռային տարբերություններ – դիագնոստիկ – հետախուզում

Differences in the behavior of non-linear male and female rats, in the condition of free choice animals daytime diazepam's injection were investigated. The anxiogenic effect of used tranquilizer was revealed, which is expressed in decreasing of the number of peeps from the "dark box", as well as reducing the time of stay of animals in the open space. The anxiogenic effect was more expressed in males than in females.

Rats – sexual differences – diazepam – exploratory behavior

В ряде исследований было установлено, что самцы и самки экспериментальных животных демонстрируют различное поведение и по-разному реагируют на введение им тех или иных фармакологических препаратов [1, 4, 5, 9, 10]. В этой связи, в частности, актуальной задачей нейробиологии ставится изучение половых различий при тестировании анксиолитических препаратов на животных с целью последующей оптимальной терапии тревожного состояния у человека [2].

В настоящем сообщении представлены результаты исследования поведенческих проявлений в зависимости от пола крыс при введении животным анксиолитического препарата диазепам.

Материал и методика. В опытах использовалась экспериментальная модель исследовательского поведения (ЭМИП), которая представляет собой гибридный вариант “темно-светлой камеры” и “открытого поля”. [6].

Напомним, что схема проведения опытов с использованием ЭМИП предполагает, что объект исследования, крыса или мышь, предварительно помещается в комфортный для нормных животных затемненный отсек. После периода адаптации (300с) открывается доступ в открытое пространство и имеется возможность с помощью видео и компьютерного протоколирования поведения в течение 300 с оценить степень конфликта между потребностью животного в получении новой информации (выход из экологически предпочитаемого темного замкнутого укрытия в “открытое поле”) и потребностью “самосохранения”, которое инициирует оценку новой ситуации с точки зрения потенциальной опасности для организма (реакция тревоги).

При оценке характера влияния транквилизатора на поведенческие проявления в зависимости от пола животных использовался анксиолитический препарат диазепам (производитель: Алкалоид АД- Скопье. Республика Македония).

Как известно, диазепам способен вызывать анксиолитическую активность, купирующую страх, тревогу, внутреннее беспокойство. Учитывая это обстоятельство, в настоящем исследовании с целью получения выраженного анксиолитического эффекта при введении животным диазепама мы использовали лабораторных крыс с пассивным поведенческим проявлением.

Исследования проводились поэтапно в следующей последовательности:

1. Отбор животных с пассивными поведенческими проявлениями по сведениям, собранным у работника вивария, а также на основании собственных наблюдений за их зоосоциальным поведением.
2. Содержание отобранных животных в течение 15-ти суток в лабораторной комнате при фиксированном световом режиме в однополовых группах по 4 особи в клетках с неограниченным доступом к воде и пище.
3. Однократное тестирование поведения каждого животного (контрольные данные) в условиях ЭМИП по описанной выше схеме.
4. Через семь суток вновь проводится тестирование поведения крыс в условиях ЭМИП, но уже после однократного введения животным эталонного транквилизатора диазепама.

В опытах использовались нелинейные белые крысы обоих полов (4 самца и 4 самки) с выраженным проявлением пассивного поведения.

Диазепам (10 мг/2 мл) растворяли в растворе для инъекции и вводили животным внутривенно в дозе 0,5 мг/кг за 30 мин до тестирования в условиях ЭМИП.

Опыты ставились во временном интервале между 12⁰⁰-15⁰⁰.

Работу с животными проводили в соответствии с правилами “Европейской конвенции о защите животных, используемых в экспериментах” (Директива 2010/63/EU).

Результаты и обсуждение. При проведении опытов акцентировалось внимание на двух основных показателях тревожности – число выглядываний из “укрытия” и время, проведенное в светлом отсеке. Именно число выглядываний из закрытого отсека является наиболее адекватным, надежным и воспроизводимым показателем тревожности – снижение этого показателя при действии тех или иных факторов свидетельствует о повышении уровня тревожности [3]. Кроме того, время, проведенное животным в светлом отсеке, очевидно, также может служить для оценки степени тревожности – снижение этого показателя при действии тех или иных стрессогенных факторов свидетельствует о подавлении исследовательского поведения (увеличение тревожности) [8].

Проведенный анализ выявил поведенческие эффекты действия транквилизатора в условиях ЭМИП, противоположные прогнозируемым (рис. 1).

Как видно из рис. 1, при тестировании поведения в условиях ЭМИП вместо ожидаемого анксиолитического эффекта используемого транквилизатора наблюдается анксиогенный эффект, выражающийся в снижении числа выглядываний,

уменьшении времени пребывания животных в открытом пространстве. Примечательно, что анксиогенный эффект был более выражен у самцов, чем у самок.




Рис. 1. Динамика изменения числа выглядываний из укрытия (А) и длительность пребывания в светлом отсеке (Б) у контрольных крыс (1) и животных после введения диазепама (2) в течение всего периода тестирования (300 с); * - $p < 0,05$ (X - критерий).

Интересно отметить, что в поведении животных после введения препарата вне экспериментальной установки до и сразу после тестирования наблюдалась сравнительно высокая двигательная активность, в отдельных случаях усиливались агрессивные проявления, имели место попытки покинуть домашнюю клетку.

Таким образом, проведенные исследования выявили “анксиогенный” эффект диазепама у крыс-самцов, в значительно меньшей степени этот эффект наблюдался у крыс-самок.

Полученные данные согласуются с экспериментальными находками, описанными в литературе, где отмечается “анксиогенная” активность диазепама в дневное время [4, 5]. При этом допускается, что противоположный эффект в действии транквилизатора связан с особенностями хронергии и хронестезии, а также влиянием половых стероидов.

Как было показано ранее [1], в условиях действия стрессора – новизна (ЭМИП) самки крыс более активны и менее тревожны, чем самцы. В литературе имеются данные, показывающие, что эффекты действия “анксиогенных” факторов (электрический шок или введение β -карболинов) более выражены у самцов-крыс, чем у самок [9, 10]. В то же время действие анксиолитических факторов (препарат МК-801) в условиях “открытого поля” и “крестообразного приподнятого лабиринта” вызывает более выраженный соответствующий эффект у самок-крыс, чем у самцов [7].

Таким образом, исследование влияния транквилизатора на поведенческие проявления у крыс подтверждают положения о половом различии в эффектах анксиотропных факторов различной природы.

ЛИТЕРАТУРА

1. *Акопян Н.Э.* Проявление половых различий при исследовании спонтанного поведения крыс в условиях новизны. Биолог. журн. Армении, 66, 1. с. 36-40, 2014.
2. *Калуев А.В.* Психосексофармакология тревожности на пути создания анксиолитиков избирательного пол-зависимого действия. Nature.web.ru 2001.
(<http://nature.web.ru/db/msg.html?mid=1160040&s=>).
3. *Лапин И.П.* Уменьшение частоты выглядываний из тёмного отсека – единственный постоянный показатель влияния анксиогенов на поведение мышей в камере “свет – темнота”. Журнал высшей нервной деятельности им. И.П. Павлова, 49, вып. 3, с. 521-526, 1999.
4. *Манвелян Э.А., Батурич В.А.* Половые и хронобиологические различия в активности диазепам у крыс в тесте конфликтной ситуации. Эксперим. и клин. фармакол, 4, с. 11-13. 2008,
5. *Манвелян Э.А., Анисимова Н.А.* Половые и циркадианные различия в действии диазепам на поведение крыс при многопараметрическом тестировании. Естественные и гуманитарные науки. Томск: Изд-во Томск. гос. ун-та и Сиб. гос. мед. ун-та, 6, 1, с. 38, 2010.
6. *Саркисов Г.Т., Саркисян Р.Ш., Манукян А.М., Карапетян Л.М., Акопян Н.Э.* Исследование индивидуальных различий у животных с помощью видеотрекинга поведения. Тр... межд. конф. “Физиологические механизмы регуляции деятельности организма”. 10-13 октября Ереван, с. 280-283. 2012, 2012.
7. *Blanchard D.C., Blanchard R.J., Carobrez A.P., Venieggers R., Shepherd J.K.* MK-801 produces a reduction in anxiety-related antipredator defensiveness in male and female rats and a gender-dependent increase in locomotor behavior. Psychopharmacol., 108, 3. p. 352-362, 1992b.
8. *Crawley J.N.* Behavioural phenotyping of transgenic and knockout mice: experimental design and evaluation of general health, sensory functions, motor abilities, and specific behavioural tests. Brain Res. N. 835, p. 18-26, 1999.
9. *Heinsbroken., Van Haaren F., Van de Poll.* Sex differences in passive avoidance behavior of rats: sex-dependent susceptibility to shock-induced behavioural depression. Physiol. Behav., 43, 2, p. 201-206, 1988 .
10. *Meng I.D., Drugan R.C.* Sex differences in open-field behaviour in response to the beta-carboline FG 7142 in rats. Physiol. Behav., 54, 4. p. 701-705, 1993.

Поступила 28.04.2017



Հայաստանի կենսաբ. հանդես, 4(69), 2017

ԱՐՅԵՍՏԱԿԱՆ ՌԱԴԻՈՆՈԿԼԻԴՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ԳԱՆԳՈՒՐ ԿԱՂԱՄՔՈՒՄ ՀԻԴՐՈՊՈՆԻԿԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՀՈՂԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Լ.Մ. ՂԱԼԱԶՅԱՆ, Չ.Ս.ԱԼԵԽՍԱՆՅԱՆ, Ա.Յ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ,
Ա.Յ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, Բ.Թ.ՍՏԵՓԱՆՅԱՆ, Թ.Ս.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱՄ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ
lauraghalachyan@yahoo.com

Ուսումնասիրվել են արհեստական ռադիոնուկլիդների (^{90}Sr , ^{137}Cs կուտակման առանձնահատկություններն Արարատյան դաշտի ցողաջրաշիթային, դասական հիդրոպոնիկայի և հողի պայմաններում մշակված գանգուր կաղամբում (կալե) (*Brassica oleracea* var. *sabellica* L.): Պարզվել է, որ ցողաջրաշիթային հիդրոպոնիկայի պայմաններում աճեցված բույսերը ^{90}Sr -ի և ^{137}Cs -ի պարունակությամբ զիջել են դասական հիդրոպոնիկայի մշակաբույսերին 1,2-1,3 և 1,1-1,2 անգամ, իսկ հողային մշակաբույսերին՝ 1,8-2,0 և 1,4-1,5 անգամ: Այսինքն, ցողաջրաշիթային հիդրոպոնիկ եղանակն ապահովել է ռադիոէկոլոգիապես առավել անվտանգ բուսահումքի ստացում, քան դասական հիդրոպոնիկան և հողը: Միաժամանակ, գանգուր կաղամբի բուսահումքում վերահսկվող արհեստական ՌՆ-ի (^{90}Sr , ^{137}Cs) պարունակությունը չի գերազանցել ՍԹՆ-ն:

Գանգուր կաղամբ – արհեստական ռադիոնուկլիդներ – ցողաջրաշիթային
և դասական հիդրոպոնիկա – հող

Изучались особенности накопления искусственных радионуклидов (РН) ^{90}Sr , ^{137}Cs в капусте кудрявой (кале) (*Brassica oleracea* var. *sabellica* L.), выращенной в условиях водоструйной, классической гидропоники и почвы Араратской равнины. Выяснилось, что по содержанию ^{90}Sr , ^{137}Cs растения водоструйной гидропоники уступали растениям классической гидропоники в 1,2-1,3 и 1,1-1,2 раза, а растениям почвы в 1,8-2,0 и 1,4-1,5 раза. Таким образом, водоструйный гидропонический метод обеспечил получение радиоэкологического более безопасного растительного сырья, чем классическая гидропоника и почва. Одновременно содержание искусственных РН (^{90}Sr , ^{137}Cs) в растительном сырье капусты кудрявой не превышало ПДК.

Капуста кудрявая – искусственные радионуклиды – водоструйная и
классическая гидропоника – почва

The accumulation particularities of artificial radionuclides (RN) ^{90}Sr , ^{137}Cs in curly cabbage (kale) (*Brassica oleracea* var. *sabellica* L.) cultivated in Ararat valley water stream, classical and soil conditions were studied. It was found out that plants grown under water stream conditions have 1,2-1,3 and 1,1-1,2 times lower content of ^{90}Sr and ^{137}Cs than the ones grown under classical hydroponics, and 1,8-2,0 and 1,4-1,5 times lower than the plants grown in soil conditions. So the water stream hydroponics is safer radio-ecological method for production of raw material, than classical hydroponics and soil culture, at the same time the content of controlled artificial RN (^{90}Sr , ^{137}Cs) don't exceed MACL in plants of curly cabbage.

Curly cabbage – artificial radionuclides – water stream and classical hydroponics – soil

Կենսաբանորեն պոտենցիալ մեծ վտանգ են ներկայացնում ^{90}Sr (կիսատրոհման պարբերությունը՝ $T_{1/2} = 28,6$ տարի) և ^{137}Cs ($T_{1/2} = 30,1$ տարի) արհեստական ռադիոնուկլիդները (ՌՆ), որոնք տեղաշարժվելով ագրոհամակեցությունների կենսաերկրաբաժնիական ոռոգիչ ջուր – հող – բույս և հիդրոպոնիկայի սուբստրատ-սննդալուծույթ-բույս փոխանցման շղթաների միջոցով կուտակվում են բույսերում, մասնավորապես, բանջարաբույսերում, ինչի հետևանքով կարող են ներթափանցել մարդու օրգանիզմ՝ պատճառ դառնալով զանազան հիվանդությունների առաջացմանը [2, 9, 10, 11]:

Հայկական ատոմային էլեկտրակայանը (ՀԱԷԿ) գտնվում է Արարատյան դաշտում, որի 30 կմ շառավիղով գոտին իր մեջ ներառում է Երևանը: Հաշվի առնելով վերոնշյալը, ռադիոէկոլոգիապես առավել անվտանգ բուսահումքի ստացման նպատակով մեր կողմից ուսումնասիրվել են ^{90}Sr -ի և ^{137}Cs -ի կուտակման առանձնահատկությունները ցողաջրաշիթային, դասական հիդրոպոնիկայի և հողի պայմաններում մշակված բանջարաբույս զանգուր կաղամբում:

Նյութ և մեթոդ: Հետազոտությունները կատարվել են 2015-2016 թթ. Հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտում (Երևան) Արարատյան դաշտում, որը գտնվում է ծովի մակերևույթից 850-900 մ բարձրության վրա: Աչքի է ընկնում չոր մայրցամաքային կլիմայով, որտեղ տարեկան միջին ջերմաստիճանը հուլիս-օգոստոս ամիսներին $25-26\text{ }^{\circ}\text{C}$ է, տեղումների տարեկան միջին գումարը հասնում է մինչև 200-300 մմ [3]: Ցողաջրաշիթային հիդրոպոնիկան իր մեջ ներառել է բույսերի անհող աճեցման երեք եղանակ՝ գլանային, ակոսային, համատարած: Գանգուր կաղամբի (*Brassica oleracea* var. *sabellica* L.) հիդրոպոնիկ եղանակով ստացված սածիլները 1մ^2 վրա 8 բույս խտությամբ տնկարկվել են ցողաջրաշիթային մոդուլներում դասական հիդրոպոնիկ վեգետացիոն անոթներում և հողում: Հիդրոպոնիկայում որպես լցանյութ կիրառվել է նախօրոք KMnO_4 -ի 0,05 %-ոց լուծույթով պիտահանված, 3-15 մմ մասնիկների տրամագծով հրաբխային խարամը: Գիտափորձերում կիրառվել է Գ.Ս. Դավթյանի կողմից առաջարկված սննդալուծույթը [6], ինչը ջրաշիթային հիդրոպոնիկայում օրվա ընթացքում պարբերաբար (գարնանը և աշնանը՝ 6-8 անգամ, իսկ ամռանը՝ 10-20 անգամ հաճախականությամբ և 10-15 վրկ. տևողությամբ) շիթի ձևով անվերադարձ մղվել է բույսի արմատաբնակ միջավայր: Մեկանգամյա տրվող լուծույթի չափը կազմել է գարնանը՝ 20-30, ամռանը և աշնանը՝ 30-50 մլ/բույս: Դասական հիդրոպոնիկայում բույսերը սնուցվել են գարնանը և աշնանը 1-2, իսկ ամռանը՝ 2-3 անգամ: Հողը ծառայել է որպես ստուգիչ, որում հումուսը կազմել է 1,5-2,5 %, հարուստ է ֆոսֆորով և կալիումով: Հողային մշակույթում պահպանվել են ընդունված ագրոտեխնիկական կանոնները (հողի պարարտացում, փխրեցում, պարբերաբար ջրումներ՝ 3-4 օրը 1 անգամ, մոլախոտերի մաքրում և այլն): Ստուգիչի հողերը ոռոգվել են արտեզյան ջրով: Հետազոտությունների համար փորձանմուշներ են վերցվել սննդալուծույթի պատրաստման համար օգտագործվող ելային արտեզյան ջրից, սննդալուծույթից, հողերի 0-30 սմ հողաշերտերից, զանգուր կաղամբի վերգետնյա զանգվածից: Փորձանմուշներում արհեստական ՌՆ-ը որոշվել են ռադիոքիմիական մեթոդներով՝ ՎՄՓ-1500 փոքր ֆոնային սարքի միջոցով [8]: Ստացված տվյալները համեմատվել են Հայաստանի հանրապետության և Ռուսաստանի դաշնության ընդունած սահմանային թույլատրելի խտությունների (ՍԹԽ) հետ [1, 2, 5, 7]:

Արդյունքներ և քննարկում: Հայտնի է, որ ՌՆ-ը ներթափանցում են բույսերի մեջ արմատների միջոցով՝ արմատաբնակ միջավայրից և տերևների միջոցով՝ օդային ավազանից [2, 9, 10, 11]: Պարզվել է, որ հիդրոպոնիկայում արմատների միջոցով բույսերի մեջ ՌՆ-ի ներթափանցման սկզբնաղբյուր է ծառայել սննդալուծույթը, իսկ հողում՝ ոռոգիչ ջուրը և հողը (աղ. 1): Կարելի է ենթադրել, որ և հիդրոպոնիկայում, և հողում բույսերի վերգետնյա օրգանների մեջ տեղի է ունեցել նաև ՌՆ-ի արտարմատային ներթափանցում օդային ավազանից՝ մթնոլորտային տեղումների, փոշու, ծխի, մրի, աերոզոլների ձևով: Կարելի է ենթադրել, որ արտարմատային ճանապարհով ^{137}Cs -ի ներթափանցումը բույսերի վերգետնյա օրգանների մեջ գերազանցել է ^{90}Sr -ին, քանի որ ըստ գրականության տվյալների [2], ՀԱԷԿ-ի արտանետումներում գերակշռում է ^{137}Cs -ը: Աղ. 1-ի տվյալները ցույց են տալիս, որ սննդալուծույթում ^{90}Sr -ի պարունակությունը 11, իսկ ^{137}Cs -ինը՝ 10 անգամ գերազանցել է ելային արտեզյան ջրի համանման ցուցանիշներին: Սա նշանակում է, որ սննդալուծույթի պատրաստման համար օգտագործված քիմիական նյութերը, ամենայն հավանականությամբ, պարունակել են ^{90}Sr -ի և ^{137}Cs -ի միացություններ: Արտեզյան ջրում ^{90}Sr -ի պարունակությունը գերազանցել է ^{137}Cs -ին 13, իսկ սննդալուծույթում՝ 15 անգամ: Ի տարբերություն սննդալուծույթի, հողում ^{137}Cs -ի պարունակությունը գերազանցել է ^{90}Sr -ին 1,4 անգամ (հողաշերտի խորությունը՝ 0-30 սմ, $^{90}\text{Sr}=7,2\text{ Բք/կգ}$, $^{137}\text{Cs}=10,0\text{ Բք/կգ}$):

Աղյուսակ 1. ^{90}Sr -ի և ^{137}Cs -ի պարունակությունը արտեզյան ջրում և սննդալուծությունում

Նմուշի տեսակը	^{90}Sr	^{137}Cs
	Բք/լ	
Արտեզյան ջուր	0,04	0,003
Սննդալուծությո՞ւթ	0,44	0,030
Սթխ խմելու ջրի համար [2, 7]	5,0	11,0

Ռադիոէքիմիական վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ Արարատյան դաշտի միևնույն հողա-կլիմայական և ռադիոէկոլոգիական լարվածության պայմաններում (ՀԱԷԿ-ի տեխնածին ազդեցության 30 կմ շառավիղով գոտի) կախված մշակման եղանակից (հիդրոպոնիկա, հող) զանգուր կաղամբը կուտակել է տարբեր քանակությամբ ՌՆ (աղ. 2): Այսինքն, բույսերի մշակման եղանակը որոշակիորեն ազդել է բուսահումքի ռադիոակտիվության վրա: Ընդ որում, հողային մշակաբույսերը գերազանցել են հիդրոպոնիկ մշակաբույսերին ^{90}Sr -ի պարունակությամբ՝ 1,5-2,0 անգամ, ^{137}Cs -ի պարունակությամբ՝ 1,2-1,5 անգամ: Ռադիոէկոլոգիապես առավել անվտանգ բուսահումք ապահովել է ցողաջրաշիթային հիդրոպոնիկան: Այսպես, ցողաջրաշիթային հիդրոպոնիկայում բույսերը ^{90}Sr -ի և ^{137}Cs -ի պարունակությամբ զիջել են ինչպես դասական հիդրոպոնիկայում (1,2-1,3 և 1,1-1,2 անգամ), այնպես էլ հողային պայմաններում աճեցվածներին (1,8-2,0 և 1,4-1,5 անգամ):

Կարելի է ենթադրել, որ ցողաջրաշիթային հիդրոպոնիկական համակարգում ռադիոէկոլոգիական լարվածությունը նվազել է (սննդարար լուծույթի ծախսի կրճատում, բույսերի սնուցման շիթային եղանակ, սննդարար լուծույթի և լցանյութերի շփման մակերեսի փոքրացում), որի շնորհիվ բույսերի արմատաբնակ միջավայրում նվազել է ՌՆ-ի պարունակությունը և ՌՆ-ի տեղաշարժը սննդարար – լուծույթ – բույսի արմատ շղթայով: Արդյունքում, ցողաջրաշիթային հիդրոպոնիկ եղանակն ապահովել է ռադիոէկոլոգիապես ավելի անվտանգ բուսահումքի ստացում, քան դասական հիդրոպոնիկական և հողը: Թեև սննդալուծությունում ^{90}Sr -ը գերազանցել է ^{137}Cs -ին 15 անգամ (աղ. 2), սակայն հիդրոպոնիկ տարբեր համակարգերում մշակված զանգուր կաղամբի բուսահումքում ^{90}Sr -ի պարունակությունը գերազանցել է ^{137}Cs -ին ընդամենը 1,1-1,2 անգամ: Հողում մշակված զանգուր կաղամբի բուսահումքում նույնպես ^{90}Sr -ի պարունակությունը գերազանցել է ^{137}Cs -ին, (1,5 անգամ), թեև հողում գերակշռել է (1,4 անգամ) ^{137}Cs -ի պարունակությունը: Ըստ երևույթին, ի հայտ են եկել զանգուր կաղամբի կենսաբանական առանձնահատկությունները և հանքային սննդատարրերը ընտրողաբար կլանելու հատկությունները: Հիդրոպոնիկ տարբեր համակարգերում զանգուր կաղամբի բուսահումքում ^{90}Sr -ի պարունակությունը գերազանցել է ^{137}Cs -ին ընդամենը 1,1-1,2 անգամ, իսկ հողային մշակությամբ՝ 1,5 անգամ:

Հավանաբար, զանգուր կաղամբի մեջ ՌՆ-ը ներթափանցել են ինչպես արմատների միջոցով հիդրոպոնիկայում սննդալուծությո՞ւթից կամ հողից և ոռոգիչ ջրից, այնպես էլ վերգետնյա օրգանների միջոցով արտարմատային եղանակով օդային ավազանից (մթնոլորտային տեղումներ, հիդրո և աերոզոլներ, փոշի):

Հաշվարկը ցույց է տվել, որ զանգուր կաղամբի համար սննդալուծությո՞ւթ-բույս և հող-բույս համակարգերում ^{90}Sr - ^{137}Cs զույգի դիտվող հարաբերակցությունների (ԴՀ) ($^{90}\text{Sr}/^{137}\text{Cs}$ բույսում, $^{90}\text{Sr}/^{137}\text{Cs}$ սննդալուծությո՞ւթում կամ հողում) արժեքները հիդրոպոնիկայում կազմել են 0,07-0,08; իսկ հողում՝ 2,1 [10]: Այսինքն՝ հիդրոպոնիկայում ԴՀ<1-ից, ինչը նշանակում է, որ մշակաբույսերը սննդալուծությո՞ւթից ավելի ինտենսիվ կլանել են ^{137}Cs -ը, իսկ հողից՝ ^{90}Sr -ը (աղ. 2):

Աղյուսակ 2. ^{90}Sr -ի և ^{137}Cs -ի պարունակությունը զանգուր կաղամբի բուսահումքում և ՌՆ-ի հարաբերական ցուցանիշները հիդրոպոնիկայում և հողում

Տարբերակ	⁹⁰ Sr	¹³⁷ Cs	ԴՀ, ⁹⁰ Sr/ ¹³⁷ Cs	⁹⁰ Sr	¹³⁷ Cs
	Բք/կգ			Կգ	
Գլանային	9,9	8,7	0,08	22,5	290
Ակոսային	8,8	8,3	0,07	20,0	277
Համատարած	9,5	8,0	0,08	21,6	267
Դասական հիդրոպոնիկա	11,8	9,8	0,08	26,8	327
Հող (ստուգիչ)	17,6	11,9	2,1	2,4	1,2
Սթխ [1 5 7]	50	130	-	-	-

Սա հաստատվել է ՌՆ-ի կուտակման գործակիցների (ԿԳ) (ՌՆ-ի քանակը բույսում, Բք/կգ: ՌՆ-ի քանակը սննդալուծույթում, Բք/լ կամ հողում, Բք/կգ) արժեքներով: Գանգուր կաղամբի համար հիդրոպոնիկայում ^{137}Cs -ի ԿԳ $> ^{90}\text{Sr}$ -ի ԿԳ-ից 12,2-13,8 անգամ, իսկ հողում ^{90}Sr -ի ԿԳ $> ^{137}\text{Cs}$ -ի ԿԳ-ից 2,0 անգամ:

Այսպիսով, Նորագույն ցողաջրաշիթային հիդրոպոնիկ եղանակը բուսահումքի արտադրման ռադիոէկոլոգիապես ավելի անվտանգ կենսատեխնոլոգիական եղանակ է, քան դասականը և հողային մշակույթը: Անկախ մշակման եղանակից, գանգուր կաղամբի բուսահումքում վերահսկվող արհեստական ՌՆ-ի (^{90}Sr , ^{137}Cs) պարունակությունը չի գերազանցել ՍԹԽ-ն:

Գործնական առաջարկ. Գանգուր կաղամբի բուսահումքի արտադրման համար առաջարկվում է ցողաջրաշիթային հիդրոպոնիկ կենսատեխնոլոգիական եղանակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թարմ պտուղ բանջարեղենի տեխնիկական կանոնակարգ հավելված. ԶՀ կառավարության ղեկավարների 21-ի 1913-Ն որոշում, 2006:
2. ԶՀ կառավարության առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի գործունեության հաշվետվություն, 2014թ. www.anra.am/upload/Annu.
3. Վալեսյան Լ.Վ. /Խմբ. Զայաստանի ազգային ատլաս, Ա հատոր, Ե., 232 էջ, 2007:
4. Бабаян Г.Б. Почвы и природные условия Дилижанской лесной агрохимической станции (ДИЛАС). Сообщения Института агрохимических проблем и гидропоники, N21, с. 21-25, 1980.
5. Гигиенические требования к безопасности и пищевой ценности пищевых продуктов. Санитарно-эпидемиологические правила и нормы (СанПиН 2.3.2.1078-01). М., Минздрав РФ, 164 с., 2002.
6. Даевян Г.С. Гидропоника. В.кн.: Справочная книга по химизации сельского хозяйства. М., Колос, с. 382-385, 1980.
7. Нормы радиационной безопасности (НРБ-99): Гигиенические нормативы. М., Центр санитарно-эпидемиологического нормирования гигиенической сертификации и экспертизы Минздрава России. М, 116 с., 1999.
8. Павлоцкая Ф.И. Методы определения ^{90}Sr и других изотопов. В кн.: Физико-химические методы исследования почв. М., 126 с., 1966.
9. Переволоцкая Т.В. Радиационное лесоводство: основы лесной радиоэкологии: практ. рук-во для студентов. Гомель, ГГУ им. Ф. Скорины, 45 с., 2014.
10. Сельскохозяйственная радиоэкология. Под ред. Р.М. Алексакина. Н.А. Корнеева. М., Экология, 400 с., 1992.
11. Ghalachyan L.M., Asatryan A.Z., Kocharyan K.A., Tadevosyan L.S. The Accumulation of Artificial Radionuclides in Spice Herbs in Different Zones under the impact of the ANPP, "Bulletin" of State Agrarian University of Armenia, N 2, p. 17-20, 2014.

Ստացվել է 11.05.2017



Հայաստանի կենսաբ. հանդես, 4(69), 2017

**ՀՈԼՇՏԻՆ ԵՎ ՖԼԵՎԿԻ ԳԵՂԵՐԻ ԵՐՐՈՐԴ ԾՆԻ
ԿՈՎԵՐԻ ԱՐՏԱԿԱԶՄՎԱԾՔԻ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ԿԱՊԸ ԿԱԹՆԱՅԻՆ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

Մ.Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան
marinehovhannisyan1974@mail.ru

Հետազոտությունը կատարվել է 2016 թ. ՀՀ Սյունիքի տարածաշրջանի «Վամաքս» ՍՊԸ կաթնային համալիրում, որի համար Հոլշտին և Ֆլեկվի ցեղերից կազմվել է երկու խումբ: Ներկրված շուրջտարյա մուրային պահվածքի պայմաններում փորձնական խմբերի կովերը կերակրվել ու խնամվել են պահվածքի միանման պայմաններում: Երրորդ լակտացիայի 305 օրվա ընթացքում Հոլշտին ցեղի կովերի մոտ կենդանի զանգվածը 649,5 կգ էր, կթի քանակը՝ 7712 կգ, յուղի պարունակությունը 3,75 %, իսկ Ֆլեկվի ցեղի կովերի մոտ կենդանի զանգվածը 617,5 կգ էր, կիթը՝ 5116 կգ և յուղը՝ 4,0 %, սպիտակուցի պարունակությունը՝ համապատասխանաբար 3,24 % և 3,41 %:

Կովերի կթի քանակի և կրծքի փաթի միջև բավարար համահարաբերակցության գործակից գրանցվել է Հոլշտին ցեղի կովերի մոտ՝ $r=0,763$, իսկ Ֆլեկվի ցեղի կովերի համահարաբերակցության գործակիցն ընդհակառակը ցածր էր՝ $r = 0,20$:

Համակազմվածք – արտակազմվածք – մարմնամասեր – հարաբերակցություն

Исследование проводилось в 2016 году в молочном хозяйстве ООО “Вамакс” в условиях круглогодичного стойлового содержания завезенных коров пород Голштейн и Флекви. Животные содержались в одинаковых условиях кормления.

Результаты исследований показали, что коровы голштинской породы третьего отела по живой массе 649,5 кг проявили молочную продуктивность 7712 кг, содержание молочного жира составило 3,75 %, а молочная продуктивность коров породы Флекви (617,5 кг живой массы) составляет 5116 кг, содержание молочного жира 4,0 %, по количеству белка соответственно – 3,24 % и 3,41 %. Коэффициент корреляции между удоем и обхватом груди у коров голштинской породы составлял $r = 0,763$, а у коров породы Флекви – $r = 0,20$.

Экстерьер – конституция – телосложение – соотношение

The research was carried out in 2016 in the dairy farm of LLC "Vamax" in conditions of year-round stable care of imported cows of the 3rd lactation period from Holstein and Flekvy breed in two groups. The imported experimental cows kept in a year-round manger conditions were fed and cared in the same breeding conditions.

Analysis of the research results showed that the third-calf Holstein cattle in a live weight of 649.5 kg on the 305th lactation day demonstrated a milk productivity of 7712 kg, the milk fat content was 3.75%. The milk productivity of the Flekvy cows (617.5 kg of live weight) was 5,116 kg, the content of milk fat was 4.0%, and protein were 3,24 % and 3,41 % respectively. A sufficient correlation coefficient between the amount of milk and the udder girth in the Holstein cows is identified, which makes $r = 0.763$, and for the breeds of the Flekvy breed $r = 0.20$.

Exterior – constitution – measurement – stature – correlation

Տոհմային աշխատանքի գործնականում վաղուց օգտագործում են կենդանիների գնահատումն ըստ արտակազմվածքի և համակազմվածքի, հիմք ընդունելով կենդանիների տնտեսական օգտակար հատկանիշների և համակազմվածքի, արտակազմվածքի կապը:

Օգտվելով համակազմվածքի և արտակազմվածքի գնահատման արդյունքներից, հեշտ է ընտրել ցանկալի տիպի կենդանիներին, որոնք օժտված են լավագույն առողջությամբ, բավարար վերարտադրողական ունակությամբ և ունեն բարձր մթերատվություն: Տարբեր մթերատվություն ունեցող ցեղերը հեշտությամբ զանազանվում են իրարից ընդհանուր (հաբիտուսի) տեսքով: Ըստ արտակազմվածքի կաթնատու կովերին ընտրելիս առավելություն են ստանում այն կովերը, որոնք ունեն երկար խորը կուրծք, ողերի թեք դրվածք, հավաքված որովայն, որոնց մոտ որպես օրենք կաթի սեկրեցիան ավելի բարձր է [1, 2]: Հետևաբար կովերի ընտրումն ըստ արտակազմվածքի և համակազմվածքի նպատակ է հետապնդում բուծվող նախիրներում կամ ցեղում ունենալ առողջ, ամուր համակազմվածքով, դիմացկուն, համաչափ մարմնակազմությամբ և բարձր մթերատվությամբ կենդանիներ:

Նյութ և մեթոդ: Հետազոտությունը կատարվել է 2016 թ. ՀՀ Սյունիքի տարածաշրջանի «Վամաք» ՍՊԸ կաթնային համալիրում, որի համար կազմվել է երկու խումբ.

I-ին՝ մաքրացել հոլշտին – 10 գլուխ (h)

II-րդ՝ մաքրացել ֆլեկվի – 10 գլուխ (Ֆ)

Եվրոպական երկրներից ներկրված, շուրջտարյա մսուրային պահվածքի պայմաններում աճեցվող և պահվող փորձնական խմբերի կովերը կերակրվել ու խնամվել են ստեղծված լավագույն միանման պայմաններում՝ ըստ ֆիզիոլոգիական վիճակի: Օրական ստացել են 301,5 ՄՁ փոխանակային էներգիա և 3,68 կգ մարսելի պրոտեին:

Ուսումնասիրվել է համեմատվող ցեղերի արյան (հեղուկ հյուսվածք) մեջ գտնվող ընդհանուր սպիտակուցի, ալբումինի և գլոբուլինի քանակները, որոնք խոշոր դեր են խաղում օրգանիզմի կենսականորեն կարևոր ֆունկցիաների ղեկավարման գործում:

Կովերի արտակազմվածքը և համակազմվածքը գնահատվել է նկարագրական (մարմնի ընդհանուր տեսքը՝ հաբիտուս և ձևը), չափումների և բալային գնահատման մեթոդով [3]: Օգտագործվել է նաև օժանդակ մեթոդը՝ լուսանկարահանման, որը լրացրել է արտակազմվածքի մանրամասն նկարագրությունը և հնարավորություն է տվել տպավորություն ստանալու գնահատվող կենդանու մասին: Կովերի կրծի անատոմիական և ձևաբանական կազմը, բալային գնահատումը, մեքենայակթման պիտանելիությունը ուսումնասիրվել է համաձայն լատվիական գյուղատնտեսական ակադեմիայի աշխատակիցների կողմից մշակած կրծի գնահատման մեթոդիկայի՝ կթից առաջ [4]: Կենդանի զանգվածը որոշվել է սալակշեռքով (0,01 ճշտությամբ), որը կշռելուց առաջ խնամքով ստուգվել և հավասարակշռվել է առավոտյան՝ կթելուց հետո, մինչև կերակրելը և ջրելը:

Արտակազմվածքը և համակազմվածքը գնահատվել է երրորդ լակտացիայի 2-րդ ամսում: Ուշադրություն է դարձվել կենդանիների մաշկի առաձգականության, ճկունության, խոնավության, մաշկի գույնի և նրա ենթամաշկային շերտի զարգացման, մազածածկույթի, եղջյուրների բնույթի վրա: Կենդանիների արտակազմվածքային առանձնահատկությունների համեմատական ուսումնասիրության նպատակով կատարվել են մարմնամասերի հետևյալ չափումները. մնդալի բարձրությունը, գոտկատեղի բարձրությունը, իրանի թեք երկարությունը, գտոսկրերի լայնությունը, նստաթմբերի լայնությունը, նստաթմբերի բարձրությունը, նախադաստակի փաթը, կրծքի փաթը, կրծքի խորությունը, կրծքի լայնությունը: Կովերին կթում են գերմանական արտադրության «ԻՄ պուլս H66» կթի սարքավորումով, որը չափում է կթված կաթի քանակը, ժամանակը (կթի արագությունը), կաթում պարունակվող յուղի և սպիտակուցի քանակները: Ուսումնասիրվել է հոլշտին և ֆլեկվի ցեղերի կովերի երրորդ լակտացիայի կաթնային մթերատվությունը յուրաքանչյուր ամիս, որի հաշվառման ամփոփ տվյալները մշակվել են կենսաչափական եղանակով [5]: «Վամաք» ՍՊԸ տնտեսությունն իր գործունեությամբ համապատասխանեցվել է եվրոպական չափանիշներին, որտեղ կիրառվում է ինտենսիվ տեխնոլոգիա՝ կենդանիների խնամքը, հիմնական ու օժանդակ պրոցեսները փոխհամաձայնեցված են և իրականացվում են հատուկ մեքենաներով:

Արդյունքներ և քննարկում: Արյան պլազմայի սպիտակուցի պարունակության առավել բարձր ցուցանիշ ունեն հոլշտին ցեղի կովերը՝ 8,01 %, որը գերազանցում է ֆլեկվի ցեղի կովերին 0,34 %-ով, տարբերությունը հավաստի է ($p=0,95$): Գլոբուլինի քանակի միջցեղային տարբերությունը կազմում է 0,01 %, որը հավաստի չէ, իսկ ալբումինի քանակի տարբերությունը համապատասխանաբար՝ 0,33 % է և $p\geq 0,95$: Հոլշտին և ֆլեկվի ցեղերի կովերի մարմնամասերի չափումները բերված են աղ. 1-ում:

Աղյուսակ 1. Հոլշտին և Ֆլեկվի ցեղերի երրորդ լակտացիայի կովերի մարմնամասերի չափումները, սմ (n=10)


Մարմնամասերի չափումները, սմ	Հոլշտին				Ֆլեկվի			
	Կենսաչափական				ցուցանիշները			
	Lim	M±m	σ	CV%	Lim	M±m	σ	CV%
Բարձրությունը մնդավում	132...164	144,5±3,13	9,91	6,85	130...146	139,0±1,826	5,77	4,15
Բարձրությունը գոտկատեղում	139...163	148,6±2,109	6,67	4,49	139...150	145,4±1,098	3,47	2,39
Բարձրությունը Նստաթմբերում	123...137	131,9± 1,390	4,38	3,33	113,2...132	122,1±2,12	6,71	5,49
Լայնությունը Նստաթմբերում	28 ... 52	36,3± 2,733	8,64	23,80	22...30	26,93±0,744	2,35	8,73
Իրանի թեք երկարությունը	140...166	152,9±3,526	11,15	7,29	138...167	148,8±2,897	9,16	6,16
Լայնությունը զստոսկրերում	46...74	54,1± 2,834	8,96	16,56	52...62	54,8±1,083	3,42	6,25
Կրծքի փաթը	173...218	201,7± 5,249	16,60	8,23	190...220	202,7±3,138	9,92	4,89
Կրծքի խորությունը	42...81	65,9± 3,761	11,89	18,04	70...83	74,4±1,759	5,56	7,48
Կրծքի լայնությունը	48...66	55,5±2,207	6,98	12,58	45...50	47,7±0,518	1,64	3,43
Նախադաստակի փաթը	21 ...24	22,6± 0,306	0,96	4,27	22...23	22,4±0,163	0,52	2,30
Կենդանի զանգվածը, կգ	550...770	649,5± 24,59	77,76	11,97	590...650	617,5± 7,72	24,41	3,95

Պարզվել է, որ մնդավի բարձրությամբ հոլշտին ցեղի կովերը գերազանցել են Ֆլեկվի ցեղի կովերին 5,5 սմ կամ 3,9% -ով, գոտկատեղի բարձրությամբ՝ 3,2 սմ կամ 2,20 %-ով, իրանի թեք երկարությամբ՝ 4,1 սմ կամ 2,76 %-ով, կրծքի լայնությամբ՝ 7,8 սմ կամ 14,05 %-ով, Նախադաստակի փաթի չափումով՝ 0,2 սմ-ով կամ 0,89 %-ով: Ըստ կրծքի փաթի, կրծքի խորության և զստոսկրերի լայնության չափումների հոլշտին ցեղը զիջում է Ֆլեկվի ցեղին համապատասխանաբար -1; -8,5 և -0,7 սմ-ով կամ 0,49; 12,89 և 1,29%-ով, (աղ. 2, նկ. 1):

Աղյուսակ 2. Երրորդ լակտացիայի կովերի արտակազմվածքային մարմնաչափումների համեմատումը (n=10)

Չափումների անվանումը, սմ	Մաքրացեղեր		Տարբերությունը	
	հոլշտին	Ֆլեկվի	բացարձակ թվերով	%- ով
Մնդավի բարձրությունը	144,5	139,0	- 5,5	-3,9
Գոտկատեղի բարձրությունը	148,6	145,4	-3,2	-2,2
Իրանի թեք երկարությունը	152,9	148,8	-4,1	-2,7
Չստոսկրերի լայնությունը	54,1	54,8	+ 0,7	+1,29
Կրծքի փաթը	201,7	202,7	+ 1,0	+0,49
Նախադաստակի փաթը	22,6	22,4	-0,2	-0,89
Կրծքի խորությունը	65,9	74,4	+ 8,5	+12,89
Կրծքի լայնությունը	55,5	47,7	-7,8	-14,05
Նստաթմբերի բարձրությունը	131,9	122,1	-9,8	-7,43
Նստաթմբերի լայնությունը	36,3	26,93	-9,37	-25,81

Կազմվել է արտակազմվածքային պրոֆիլը, որի համար հոլշտին ցեղի մաքրացեղ կովերի չափումները ընդունվել են 100%, դուրս է բերվել բացարձակ տարբերությունը, Ֆլեկվի ցեղի մաքրացեղ կովերի չափումների շեղումը տրվել է %-ով՝ հոլշտինի նկատմամբ: Որոշվել են մարմնակազմի ինդեքսները՝ անատոմիորեն իրար հետ կապված մարմնամասերի չափերի հարաբերությունը՝ արտահայտված տոկոսներով:




Նկ. 1. Կովերի արտակազմվածքի չափումների գրաֆիկական պատկեր

Մարմնի զանգվածի զարգացման լավագույն ցուցանիշ է լեցունության ինդեքսը, որը տարիքին զուգընթաց երկու ցեղերի մոտ էլ օրինաչափ բարձրացել է և ֆլեկվի ցեղը գերազանցում է հոլշտին ցեղի համապատասխան ցուցանիշին: Կոնքակրծքային ինդեքսի տարիքային փոփոխությունն օրինաչափ է, սակայն կրծքի և զստոսկրերի լայնությունների չափումների աճի ընթացքում առավել ակնհայտ է աճի նկատելի տարբերականությունը: Կոնքակրծքային ինդեքսը համեմատաբար ցածր է ֆլեկվի ցեղի մոտ և զիջում է հոլշտին ցեղին կաթնային հատկանիշների զարգացվածությամբ: Կրծքային ինդեքսը երկու ցեղերի մոտ էլ համազոր է: Երկարաձգության կամ ֆորմատի ինդեքսը, որն արտահայտվում է իրանի թեք երկարության և մնդավի բարձրության հարաբերակցությամբ (%), ֆլեկվի ցեղի III-րդ ծնի կովերի մոտ աննշան գերազանցում է հոլշտին ցեղին:

Սղյուսակ 3. Երրորդ լակտացիայի մաքրացել կովերի մարմնակազմության ինդեքսները

Ինդեքսները, %	Ցեղերը	
	Հոլշտին	Ֆլեկվի
Երկարություն	54,39	46,47
Երկարաձգության	105,81	107,05
Կոնքակրծքային	102,59	87,04
Կրծքային	84,22	64,1
Լեցունության	131,92	136,2
Հոծանգվածության	139,58	145,83



Նկ. 2. Հոլշտին և ֆլեկվի ցեղերի կովերի ինդեքսների համեմատումը

Երկարություն և կոնքակրծքային ինդեքսներով ֆլեկվի ցեղը զիջում է հոլշտին ցեղին, աննշան գերազանցում է երկարաձգության ինդեքսով, իսկ կրծքային ինդեքսով հավասարազոր են: Տարբերությունն ի օգուտ ֆլեկվի ցեղի լեցունության ինդեքսով կազմել է 4,28 %, իսկ հոծանգվածությամբ՝ 6,25 %: Երկարաձգության կամ ֆորմատի ինդեքսը,

որն արտահայտվում է իրանի թեք երկարության և մտավի բարձրության հարաբերակցությամբ (%), խոսում է երկու ցեղերի կաթնային ուղղության մասին (աղ. 3, նկ. 2):


Երկու ցեղերի մոտ էլ մարմնամասերի հարաբերակցությունը օրինաչափ է և բնորոշ կաթնային ուղղության ցեղերին: Մեր հետազոտության արդյունքները վկայում են և միաժամանակ ժխտում վերջին տարիներին մեր հանրապետության հրապարակված գրականության փաստարկումներին, որ ֆլեկվի ցեղը անվանում են սիմենթալ և բնութագրում որպես կաթնա-մսատու ուղղության ցեղ:

Ուսումնասիրված կովերի կաթը կենսաբանական բարդ քիմիական կազմով հեղուկ է, պարունակում է 200 էլեմենտներ՝ 20 ամինաթթու, 147 յուղաթթու, 4 շաքար, 30 մակրո-միկրո տարրեր, 23 վիտամին, 20 գլիցերիդ, ֆոսֆատիդներ, ֆերմենտներ և պիգմենտներ: Կաթն իր բոլոր բաղադրամասերով արտադրվում է կաթնագեղձի էպիթելային բջիջների կողմից: Կրծի միջով 1 լ կաթի գոյանալու համար պետք է անցնի 400-500 լ արյուն: Կաթի կազմը ներկայացվում է աղ. 4-ում:


Աղյուսակ 4. Հոլշտին և ֆլեկվի ցեղերի երրորդ լակտացիայի կովերի կաթնային մթերատվությունը, (n=10)

Ցեղերը	Կենսաչափական եղանակով մշակման ցուցանիշները				
	n	Lim	$M \pm m$	σ	$C_v\%$
Լակտացիայի 305 օրվա կիթը, կգ					
Հոլշտին	10	5600... 9600	$7712 \pm 427,7$	1353	17,50
Ֆլեկվի	10	3566 ... 6734	$5116 \pm 363,2$	1148	22,40
Յուղի պարունակությունը, %					
Հոլշտին	10	3,7 ... 3,8	$3,75 \pm 0,017$	0,0527	1,41
Ֆլեկվի	10	3,7 ... 4,15	$4,01 \pm 0,06$	0,18	4,50
Սպիտակուցի պարունակությունը, %					
Հոլշտին	10	3,2 ... 3,3	$3,24 \pm 0,0163$	0,0516	1,59
Ֆլեկվի	10	3,36 ... 3,5	$3,41 \pm 0,02$	0,05	1,47

Կովերի կաթնային մթերատվության տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ III-րդ լակտացիայի 305 օրվա ընթացքում հոլշտին ցեղի կովերի մոտ կենդանի զանգվածը 649,5 կգ է, կթի բանակը՝ 7712 կգ, յուղի պարունակությունը՝ 3,75 %, իսկ ֆլեկվի ցեղի կովերի մոտ՝ կենդանի զանգվածը 617,5 կգ է, կիթը՝ 5116 կգ և յուղը՝ 4,0 %, սպիտակուցի պարունակությունը՝ համապատասխանաբար 3,24 % և 3,41 % : Մեծ նշանակություն է տրվել հոլշտին և ֆլեկվի ցեղերի կովերի 305 օրվա կաթի բանակի և կրծքի փաթի միջև գոյություն ունեցող համահարաբերակցական կապի որոշմանը, որը պայմանավորված է ժառանգականությամբ և մի շարք գործոններով (նկ.3 և 4):



Նկ. 3. Հոլշտին ցեղի կովերի կաթի բանակի և կրծքի փաթի միջև համահարաբերակցական կապը



Նկ. 4. Ֆլեկվի ցեղի կովերի կաթի քանակի և կրծքի փաթի միջև համահարաբերակցական կապը

Նկ. 3-ից երևում է, որ հոլշտին ցեղի կովերի կրծքի փաթի 0,763 սմ ավելացման դեպքում կաթի քանակը ավելանում է 1 կգ, իսկ Նկ. 4-ում կապն ավելի թույլ է արտահայտված՝ $r = 0,20$, որը փաստում է ֆլեկվի ցեղի կրծքի փաթի նկատմամբ սելեկցիա տանելիս կաթի քանակի աննշան փոփոխման մասին:

Այսպիսով, պարզաբանվել է, որ մնդավի բարձրությամբ, իրանի թեք երկարությամբ, կրծքի լայնությամբ, նախադաստակի փաթի չափումներով հոլշտին ցեղի կովերը գերազանցում են ֆլեկվի ցեղի կովերին: Կրծքի խորության, կրծքի փաթի և զստուկրերի լայնության չափումներով հոլշտին ցեղը զիջում է ֆլեկվի ցեղին համապատասխանաբար 8,5; 1 և 0,7 սմ-ով: Հոլշտին ցեղը զիջում է ֆլեկվի ցեղին լեցունության և հոծանգվածության ինդեքսներով: Կովերի կթի քանակի և կրծքի փաթի միջև բավարար համահարաբերակցության գործակից դրսևորվել է հոլշտին ցեղի կովերի մոտ՝ $r = 0,763$, իսկ ֆլեկվի ցեղի կովերի համահարաբերակցության գործակիցը ընդհակառակը ցածր է՝ $r = 0,20$:

Հորատման կամ փորվածքի միջուկ՝ փայտանյութի գլանաձև նմուշ, որը վերցվում է ծառաբնից հորատման սարքի (օչք)՝ միջոցով, 4-5 մմ տրամագծով և 10-50 սմ երկարությամբ՝ կախված հորատման սարքի տեսակից և ծառաբնի տրամագծից: Սովորաբար սարքի միջոցով գլանաձև միջուկները վերցվում են ծառաբնի ամենալայն մասից, քանի որ ենթադրվում է, որ ծառատեսակի մասին առավել շատ տեղեկատվություն կարող է պարունակել առավել լայն հատվածը: Ի տարբերություն կտրվածքի, որը վերցվում է 1 օրինակից, հորատված միջուկները վերցվում են 2-4 օրինակից, քանի որ ծառաբնից հորատման սարքի միջոցով միջուկի ստացումը գործնականում կատարվում է «կուրորեն», ուստի պետք է հորատման սարքը այնպես տեղադրել, որ այն անցնի ծառաբնի առանցքի միջով: Եթե դա հնարավոր չլինի, ապա այդպիսի նմուշի մի օրինակ ամբողջովին բավարար է փորձաքննության համար [7]:

Այսպիսի սարքավորումներ աշխարհում արտադրվում են տարբեր ընկերությունների կողմից, սակայն առավել հայտնի են Շվեդական Haglof և Ֆիննական Suunto ընկերությունները:

Դենդրոփորոնոլոգիական մեթոդի կիրառմամբ ստացված տեղեկատվությունները կարելի է օգտագործել նաև այժմ բուռն զարգացում ապրող Էկոլոգիական փորձաքննությունների կատարման և անտառային տնտեսության հետևյալ խնդիրները լուծելիս

1. Ծառատեսակների և ծառատունկերի աճման հետազոտություն
2. Անտառային աճի ձևավորման վրա Էկոլոգիական գործոնների ազդեցության հետադարձ ուսումնասիրություն
3. Անտառի և ծառերի վիճակի կանխատեսում
4. Անտառի աճի վրա անբարենպաստ գործոնների ազդեցության գնահատում
5. Անտառային տնտեսության միջոցառումների արդյունավետության գնահատում
6. Ծառերի չորացման պատճառների ուսումնասիրում

7. Ծառի կեղևի կամբիալ ակտիվության ընդհատման հստակ ժամանակագրության մշակում
8. Հատված ծառի ծագման իդենտիֆիկացում
9. Աճի տարբեր փուլերում ծառի տեխնիկական հատկանիշների գնահատում
10. Լոկալ հատվածում անտառի ֆիտոցենոզի վերականգնում,
11. Ներպուպուլացիոն էկոլոգիական ժառանգական հատկանիշների ուսումնասիրություն [20]:

Ապօրինի անտառահատումները սովորաբար կատարվում են ոչ ակնհայտ պայմաններում և դրանց բացահայտման համար անհրաժեշտ են հատուկ գիտելիքներ: Ծառերի օղակների խրոնոլոգիայի խաչաձև ժամանակագրության մեթոդը հուսալի փորձագիտական գործիք է, որը կիրառման արդյունավետ պատմություն ունի արտասահմանյան հետազոտական համապատասխան ոլորտներում, ինչպես նաև դատական պրակտիկայում:

Օգտագործելով դատական դենդրոխրոնոլոգիայի մեթոդները փորձաքննությունների մեջ հնարավոր է դառնում՝ կարճ ժամանակահատվածում առավել մեծ ճշգրտությամբ և ավելի բարձր որակով պատասխանել հետևյալ կարևոր հարցերի՝

1. Ի՞նչ ընտանիքի ծառատեսակներ են ներկայացված փորձաքննության:
2. Ունեն արդյո՞ք ընդհանուր պատկանելիություն հանցագործության վայրից վերցված նմուշները հատված ծառերի հետ :
3. Ո՞ր տարում և տարվա ո՞ր եղանակին է հատվել ծառը/ծառախումբը: Այլ հատված ծառերի հետ համեմատած քա՞նի տարի առաջ/հետո է կտրվել ծառը/ծառախումբը:
4. Ժամանակային ինչպի՞սի տարբերությամբ են հատվել ծառերը միմյանց հետ համեմատած:
5. Քա՞նի տարեկան է ծառը (հստակ տարեթիվ)
6. Առավել վաղ փորձաքննության ներկայացված փորձանմուշները հանդիսանում են արդյո՞ք միևնույն ծառատեսակի կտորներ:
7. Ինչպի՞սի կենսական վիճակում է եղել ծառը հատման ժամանակ: Այսպիսով՝ կիրառելով դենդրոխրոնոլոգիական մեթոդները դատական փորձաքննության մեջ, հնարավոր կլինի էապես մեծացնել փորձաքննության ապացուցողական նշանակությունը և հնարավորինս բացառել մարդկային գործոնի ազդեցությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ «Զրեական Օրենսգիրք» ՀՕ-528Ն, Ընդ. 18.04.2003թ.
2. Воронин В.И., Наурзбаев М.М., Осолков В.А. “Практика применения дендрохронологической экспертизы в ходе следственных мероприятий” Эксперт-криминалист, № 5, с. 15-20, 2010.
3. Воронин В.И., Наурзбаев М.М., Осолков В.А. “Практика применения дендрохронологической экспертизы в ходе следственных мероприятий” В.И. Эксперт-криминалист., № 3., с. 9-12, 2009.
4. Жаворонков Ю.М. “Назначение судебных экспертиз при раскрытии и расследовании преступлений, связанных с незаконными рубками леса”. Методические рекомендации. УВД по Вологодской области, 5, 2011.
5. Жаворонков Ю.М. “Судебная дендрохронология на службе криминалистики XXI века”, Лесной Вестник , 5, с. 53-56, 2014.
6. Липаткин В.А., Пальчиков С.Б., Румянцев Д.Е. и др.. “Разработка проекта методики и технологии идентификации происхождения древесины с целью подтверждения легальности его заготовки на основе дендрохронологической информации (отчет о научно-исследовательской работе)” М., МГУЛеса, 106 с., 2009.
7. Липаткин В.А., Пальчиков С.Б., Румянцев Д.Е., Жаворонков Ю.М. “Возможности использования метода перекрестной датировки древесно-кольцевых хронологий при расследовании дел, связанных с незаконной заготовкой древесины”. Теория и практика судебной экспертизы, 19, 3, с. 244-254, 2010.
8. Майорова Е.И., Гончарук Н.Ю. “К вопросу использования дендрохронологического анализа в судебно-экспертной практике”, Лесной Вестник, 5, с.153-158, 2015.

9. Розанов М.И. Дендрохронологические методы экспертизы древесины. Экспертная техника. Вып. 34, М., ВНИИСЭ, с. 45-65, 1971.
10. Розанов М.И. “Дендрохронологический метод идентификации древесины”, Криминалистика и судебная экспертиза. Вып. 2. Киев, Киевский НИИСЭ, с. 259-271, 1965.
11. Розанов М.И. “Задачи судебной дендрохронологии”. Проблемы экспертизы растительных объектов. М, ВНИИСЭ, с. 81-82, 1972.
12. Румянцев Д.Е. “Предыстория дендрохронологии”, Лесной Вестник, 1, с.50-55, 2009.
13. Синькевич С.М. “Дендрохронология в судебной экспертизе: Ограничения и перспективы”, Лесной Вестник, 5, с.166-170, 2014.
14. Унжакова С.В., Воронин В.И., Наурзбаев М.М., Жигалов Н.Ю. Дендрохронологическая экспертиза при расследовании незаконных рубок лесных насаждений. Учебное пособие”. Иркутск Восточно-Сибирский институт МВД России, 56 с., 2009.
15. Чхобадзе А.Б., Жаворонков Ю.М. “Применение дендрохронологического метода в судебно-ботанической экспертизе по делам о незаконных порубках леса”. Экспертная практика. Вып. 65. М., ЭКЦ МВД России, с.24-37, 2008.
16. Шиятов С.Г. “Методы дендрохронологии. Основы дендрохронологии. Сбор и получение древесно-кольцевой информации” Красноярск, 80 с., 2000.
17. Balouet J.C., Kevin T. Smith, D. Vroblesky, Oudijk G. Use of Dendrochronology and Dendrochemistry in Environmental Forensics . Environmental Forensics, 10, 268-276, 2009.
18. Balouet J-C., G. Oudijk, K. T. Smith, I. Petrisor, H. Grudd, B. Stocklassa, Applied Dendroecology and Environmental Forensics. Characterizing and Age Dating Environmental Releases: Fundamentals and Case Studies. Environmental Forensics, 8, 1-17, 2007.
19. Rinn F. TSAP 3.5, Reference Manual. Heidelberg, 187 pp., 1996.
20. RINNTECH. Technology for tree and wood analysis.
<http://www.rinntech.de/content/view/16/47/lang,english/index.html> , 01.02.2017
21. Wolodarsky-Franke A., Lara A. The role of “forensic” dendrochronology in the conservation of alerce (*Fitzroya cupressoides* ((Molina) Johnston)) forest in Chile. Dendrochronologia, 22, 3, p. 235, 2005.

Ստացվել է 17.05.2017



Биол. журн. Армении, 4 (69), 2017

КАРИОЛОГИЧЕСКОЕ ИЗУЧЕНИЕ ДИКОРАСТУЩЕГО ГРАНАТА АРМЕНИИ (*PUNICA GRANATUM* L.)

Н.П. СТЕПАНЯН-ГАНДИЛЯН

Институт ботаники имени А. Тахтаджяна НАН РА
ninastep.gand1@gmail.com

Представлены результаты кариологического исследования, проведенного на материале дикорастущего граната (*Punica granatum* L.), произрастающего на территории Армении. Данные о числе хромосом *P. granatum*, приводимые в литературе, весьма противоречивы ($2n = 2x = 16$ или 18). Полиплоидия отмечена лишь в культуре ткани у культивированных. Нашими исследованиями метафазных пластинок в меристеме корешков *P. granatum* отмечается наличие в наборе пары сравнительно крупных метацентрических хромосом. Очевидно, плечи этих метацентриков исследователи часто принимали за отдельные хромосомы и вследствие этого полагали, что число хромосом в наборе 18 . Однако тот факт, что при изучении мейоза в МІ всегда отчетливо просматриваются 8 бивалентов, определенно свидетельствует о присутствии в кариотипе граната не 9 -ти, а 8 -ми пар хромосом. Таким образом, у *P. granatum* основное число $x = 8$, $2n = 16$. Также отмечено наличие крупных хромосом в покое ядре, указывающее на присутствие в хромосомах крупных гетерохроматинных сегментов. Число их у разных образцов варьирует от 2 до $10-12$.

Дикорастущий гранатник – *Punica granatum* – число хромосом – хромосомы

Ամփոփված են Հայաստանում աճող վայրի նռնենու (*Punica granatum* L., *Punicaceae*) կարիոլոգիական ուսումնասիրության արդյունքները: *P. granatum*-ի բրոմոսոմային թվին վերաբերող գրականության մեջ առկա տվյալները բավականին հակասական են ($2n = 2x = 16$ կամ 18): Մշակովի նռնենու մոտ նշվում են նաև պոլիպլոիդ ձևեր: Մեր կողմից կատարված *P. granatum*-ի մետաֆազային թիթեղների ուսումնասիրման արդյունքում դիտարկվել են համեմատաբար խոշոր, մյուս բրոմոսոմներից իրենց չափերով զգալիորեն տարբերվող, մետացենտրիկ բրոմոսոմներ: Հավանաբար, այդ բրոմոսոմների թևերը հետազոտողները համարում էին առանձին բրոմոսոմներ և այդ պատճառով կարծում, որ բրոմոսոմների թիվը 18 է: Սակայն այն փաստը, որ մեյոզի ժամանակ միշտ պարզ երևում են 8 բիվալենտներ, ստույգ կերպով վկայում է նռնենու կարիոտիպում ոչ թե 9 , այլ 8 բրոմոսոմների գոյգերի առկայության մասին: Այսպիսով, *P. granatum*-ի բրոմոսոմների թիվը կազմում է $x = 8$, $2n = 16$: Ինտերֆազային կորիզում դիտարկվել են խոշոր բրոմոկենտրոններ, որը վկայում է զանգվածեղ հետերոբրոմատինային հատվածների առկայության մասին: Դրանց թիվը տարբեր նմուշների մոտ տատանվում է 2 -ից մինչև $10-12$ -ը:

Վայրած նռն – *Punica granatum* – բրոմոսոմային թիվ – բրոմոկենտրոններ

The results of the karyological study of the wild pomegranate (*Punica granatum* L., *Punicaceae*) growing on the territory of Armenia are reported. The data on chromosome number at *P. granatum* in literature is rather contradictory ($2n = 2x = 16$ or 18). The polyploidy forms are reported only at the cultivated *P. granatum*. By our investigation of the metaphase chromosomes, implemented on the meristematic tissue of the pomegranate's roots, the presence of the pair of large metacentric chromosomes, was revealed that much differ in size from others.

Obviously, the arms of those metacentric chromosomes were accepted by some researchers as the separate chromosomes, and consequently the number of chromosomes was reported to be 18 .

However the fact, that during study of the meiosis 8 bivalents are always visible, it definitely testifies to the existence in the karyotype of the 8, and not of the 9 pairs of chromosomes. Thus the basic chromosome number at the *P. granatum* is $x = 8$, $2n = 16$. In the interphase nucleuses the occurrence of the large chromocenters was visible, which indicates the presence of the heterochromatic regions in the chromosomes of *P. granatum*. The number of the chromocenters at the different specimen was varied from 2 to 10-12.

Wild pomegranate – Punica granatum – chromosome number – chromocenters

Данные о кариотипе *P. granatum* немногочисленны и касаются в основном числа хромосом. Несмотря на то что число хромосом у граната невелико, приводимая в литературе информация о них весьма противоречива. Это объясняется очень малыми размерами хромосом (0,5 – 1,0 мкм), существенно затрудняющими их исследование.

Первые известные нам данные о числе хромосом у *P. granatum* приводятся в работе Morinaga et al. [14], где при исследовании мейотического деления на материале культурного граната в метафазе I (МI) указывается 8 бивалентов, то есть $2n = 16$. Однако в следующей по времени работе Костова и др. [1], изучивших 18 культиваров и 2 образца дикорастущего граната (Азербайджан), для всех изученных образцов указывается $2n = 18$. Исследуя кариотип культиваров и диких форм граната, Поволочко [2] подчеркивает их маленькие размеры и приводит разделение хромосом по группам, отмечая метацентрические (М) и субметацентрические (SM) хромосомы, их варьирование не только по соотношению плеч, но и по размеру. Проведя кариологическое исследование культиваров граната из Средней Азии, Прусс [3] приводит $2n = 18$, отмечая при этом, что ввиду очень маленьких размеров хромосом морфологические различия выявить не удалось.

Последующие исследователи, за исключением работы Raman et al. [16], свои наблюдения проводили на культиварах, изучая метафазы первого мейотического деления (MI) и отмечая образование 8 бивалентов, то есть, у *P. granatum* $2n = 16$. В ряде работ [6, 7, 11, 12, 20] указывается на присутствие в кариотипе граната В-хромосом (до 7 В-хромосом). Полиплоидия отмечается лишь в культуре ткани у возделываемых форм *P. granatum* [10, 17 и др.]. У культиваров в MI наблюдается появление мультивалентов, что говорит о наличии структурных перестроек хромосом.

Нами было проведено исследование хромосомного набора образцов *P. granatum*, собранных в местах их естественного произрастания на территории Армении.

Материал и методика. Семенной материал для кариологического изучения дикорастущего граната (*P. granatum*) был собран в 2006 – 2010 гг. из 4 популяций, произрастающих на территории юго-восточной Армении: Мегринский район, окр. с. Шванидзор, скалистые склоны, в шибляке среди зарослей *Paliurus spina-christi*, N 38°55' – 38°56', E 046°21' – 046°22', h 625 – 814 м над ур. м.; Мегринский район, окрестности с. Нрнадзор (прежнее название Ньюади), сухие каменистые склоны, N 38°55', E 046°26', h 783 – 816 м над ур. м.; Кафанский район, окр. с. Неркин Анд, Шикахохский заповедник, хорошо освещенное редколесье, N 39°01' – 39°02', E 046°29', h 950 – 966 м над ур. м.; Горисский район, окрестности села Воротан, сухие склоны, N 39°26', E 046°23' – 046°24', h 749 – 830 м над ур. м.

С целью исследования метафазных пластинок проводилась фиксация меристематической ткани *P. granatum*. Для этого черенки, полученные из семян дикорастущего *P. granatum*, помещались в воду для укоренения. После прорастания корешков, их кончики обрабатывались колхицином (0,2 %-ный, в течение 2 ч при комнатной температуре) с последующей фиксацией в смеси спирта и ледяной уксусной кислоты (3:1). Затем проводился горячий гидролиз в 1 N HCl 15 мин при 60–62°C, гидролиз в 1 N HCl 15 мин при 60–62°C, материал окрашивался раствором Шиффа. После промывки в теплой воде кончики корешков

раздавливались в 45 %-ной уксусной кислоте и после просмотра и отбраковки, проводя через бутиловый спирт и ксилол, препараты заключались в бальзам.

Исследования метафазных пластинок проводились на микроскопе Laboval-4 при увеличении $\times 10$, $\times 100$. Микрофотографии осуществлялись фотоаппаратом Canon Digital Ixus 40.

Результаты и обсуждение. В приведенной таблице (табл. 1) обобщены известные нам данные по числам хромосом *P. granatum*.

Таблица 1. Числа хромосом *P. granatum* на основании литературных данных

Гаплоидное число хромосом (n)	Диплоидное число хромосом (2n)	Авторы
8	—	Morinaga T. et al., 1929 [14]
—	18	Костов Д. и соавт., 1935 [1]
—	16	Yasui K., 1936 [28]
—	16	Поволочко П. А., 1937 [2]
—	18	Прысс А. Г., 1938 [3]
—	16	Delay C., 1947 [5]
—	16	Tjio J. H., 1948 [25]
—	16	Thombre M. V., 1959 [24]
—	16	Miège J., 1960 [13]
8	16	Sharma A., 1970 [18]
—	18	Raman V. et al., 1971 [16]
—	16 + 4B	Mehra P., 1972 [11]
8 + 1 – 3B	—	Mehra P., 1976 [12]
8 + 0 – 7B	—	Gill B. et al., 1981 [6]
—	16 + 0 – 4B	Gill B. et al., 1984 [7]
—	16	Jadka K., Mehra P., 1986 [10]
8	—	Tobe M. et al., 1986 [26]
—	16	Xu H.-Y. et al., 1992 [28]
8	—	Shedai M., 2005 [19]
8	—	Shedai M. et al., 2005 [22]
—	16	Shedai, Nooenohammadi, 2005 [23]
—	16 + 3B	Shedai M., 2007 [20]
—	16	Shedai M. et al., 2008 [21]
—	16	Neveen A., Mona H., 2013 [15]

Как видно из табл.1, большинство исследователей приводят диплоидное число хромосом (2n, 2x). Число хромосом колеблется от 16 до 18: $2n = 2x = 16$ или 18. Полиплоидия отмечается лишь в культуре ткани у возделываемых форм *P. granatum* [10, 17 и др.].

Данные, полученные нами при изучении метафазных пластинок *P. granatum*, подтверждают данные Поволочко [2] относительно наличия в наборе пары сравнительно крупных метацентрических хромосом, значительно отличающихся от остальных (рис. 1 а, b).

Ввиду очень мелких размеров хромосом и связанных с этим затруднений при их изучении, плечи этих метацентриков исследователи, очевидно, часто принимали за отдельные хромосомы. Вследствие этого, некоторые авторы полагали, что число хромосом в наборе не 16, а 18. Следует отметить, что, согласно литературным данным, при изучении мейоза в МІ всегда отчетливо просматриваются 8 бивалентов, несмотря на их незначительную величину. Этот факт определенно свидетельствует о присутствии в кариотипе граната не 9-ти, а 8-ми пар хромосом.

Таким образом, основное число хромосом у дикорастущего *P. granatum*, установленное на образцах из Армении, $x = 8$, $2n = 16$. Это число – базовое основное число хромосом в семействе Lythraceae, которое является родственным Punicaceae

[8, 9]. В семействе Lythraceae, согласно данным указанных авторов, кроме базового основного числа $x = 8$, имеются вторичные основные числа, как $x = 15, 16, 24, 28, 32$. Изменение хромосомного числа на основе возникновения вторичных основных чисел отмечено для травянистых многолетников, у которых интенсивный процесс видообразования сопровождался полиплоидизацией. Что касается древесных родов, то, как отмечают авторы [8, 9], у них видообразование не сопровождается изменением числа хромосом. Приводимые данные справедливы и в отношении *P. granatum*.




Рис. 1. Метacentрические хромосомы на метафазных пластинках *P. granatum*
 а. метафазная пластинка в меристеме корешка граната (масштабная линейка = 10 μ m).
 б. метафазная пластинка *P. granatum*, реконструкция.

В ходе кариологического изучения меристемы корешков граната также нами было обнаружено наличие крупных хромоцентров в покоем ядре (рис. 2а, б). Наличие хромоцентров указывает на присутствие в хромосомах крупных гетерохроматиновых сегментов. Число их у разных образцов варьирует от 2 до 10-12 [4]. Варьирование числа хромоцентров происходит за счет слияния гетеропикнотических участков хромосом с образованием сложных хромоцентров.




Рис. 2. Сложные хромоцентры, образовавшиеся в результате слияния гетеропикнотических участков хромосом.

Исследованиями метафазных пластинок в меристеме корешков дикорастущего граната, произрастающего на территории Армении, было выявлено, что диплоидное число хромосом у *P. granatum* $2n = 16$, а основное число $x = 8$. В кариотипе *P. granatum* отмечено наличие пары крупных метacentрических хромосом, значительно превышающих по величине остальные. Также обнаружено большое число (2-12) хромоцентров в покоем ядре.

Работа проведена под руководством и при содействии докт. биол. наук
 Э.А. Назаровой, за что автор выражает свою искреннюю благодарность

ЛИТЕРАТУРА

1. Костов Д., Догаджина Н., Тихонова А. Число хромосом у некоторых представителей покрытосемянных растений. ДАН СССР. 3 (8), 9 (69). с. 401-404, 1935.
2. Поволочко П.А. Морфология хромосом *Punica granatum* L. ДАН СССР, 16, 1, с. 229-231, 1937.
3. Прусс А. Цитологическое изучение граната Средней Азии. Советские субтропики. 3, с. 78, 1938.
4. Степанян Н.П. Дикорастущий гранат (*Punica granatum*) в Армении. Автореф. дисс. на соиск. уч. ст. канд. биол. наук. Ереван, 23 с., 2011.
5. Delay C. Recherches sur la structure des noyaux q̄ escents chez les Phanérogames. Rev. Cytol. Et Cytophyiol. Vég. 9. p. 169-222, 1947.
6. Gill B.S., Bir S.S., Singhal V.K. Cytomorphological studies in north Indian pomegranate (*Punica granatum* L.). J. Cytol. Genet., 16. p. 35-45, 1981.
7. Gill B.S., Bur S.S., Singhal V.K. Cytological studies in some western Himalayan wood species. II. Polytales. In G. S. Paliwal (ed.). The veget. Wealth of the Himalayas. Puja Publ. Dehli., p. 497-515, 1984.
8. Graham S.A., Taciana B. Cavalcanti. New chromosome counts in the Lythraceae and a review of chromosome numbers in the family. Syst. Botany, 26. 3, p. 445-458, 2001.
9. Hiroshi Tobe, Raven P., Shirley A. Graham. Chromosome counts for some Lythraceae sens. Str. (Myrtales) and the base number of the family. Taxon. 35. 1. p. 13-20, 1986.
10. Jaidka K., Mehra P.N. Morphogenesis in *Punica granatum* (Pomegranate). Canadian Journal of Botany, 64. 8. p. 1644-1653, 1986.
11. Mehra P.N. Cytogenetical evolution on hardwoods. Nucleus. Calcutta, 15. p. 64-83, 1972.
12. Mehra P.N. Cytology of Himalayan Hardwoods. Sree Saraswaty Press (Calcutta), 1976.
13. Miège J. Troisième liste de nombres chromosomiques d'Afrique Occidentale. Ann. Fac. Sci. Univ. Dakar. 5. p. 75-85, 1960.
14. Morinaga T., Fukushima E., Kano T., M43, 15, p. 589-594, 1929.
15. Neveen A., Mona H. Morphological Karyotype Analysis of Eleven Pomegranate Cultivars. American-Eurasian J. Agric. & Environ. Sci., 13, 11, 1562-1567, 2013.
16. Raman V., Manimekalai G., Sree-Rangaswamy S. Chromosome behaviour at meiosis in *Punica granatum* L. 1971.
17. Shao J., Chen C., aruyama Y., Yamazaki Y. Chromosome numbers of cultivates plans. II Bot. Mag. Tokio, Deng X. In vitro introduction of tetraploid in pomegranate (*Punica granatum*). Plant Cell, Tissue and Organ Culture, 75, 3. p. 241-246, 2003.
18. Sharma A.K. Annual report, 1967-1968. Res. Bull. Univ. Calcutta. 2, p. 1-50, 1970.
19. Shedai M. B-chromosome variability in Pomegranate (*Punica granatum* L.) cultiars. Caryologia. 60, 3. p. 251-256, 2005.
20. Shedai M. Cytogenetic and molecular diversity of pomegranate (*Punica granatum* L.) cultivars. 18th ECARPJA Genetic Resources section meeting (Slovak Rep.). p. 156, 2007.
21. Shedai M., Aatefeh S., Zhra-Hawali S., Nooenohammadi Z., Farahanei F., Tabatabaei-Ardokanei S.Z. RAPD and cytogenetic study of some pomegranate (*Punica granatum* L.) cultivars. Cariologia. 61, 1, p. 68-73, 2008.
22. Shedai M., Mahood-Khandan, Nasre-Esfahani S. Cytogenetical study of some Iranian Pomegranate cultivars. Caryologia. 58, 2, p.132-139, 2005.
23. Shedai M., Nooenohammadi Z. Chromosome pairing and unreduced gamete formation in nineteen pomegranate (*Punica granatum* L.) cultivars. Cytologia, 70, 3, p. 257-265, 2005.
24. Thrombre M.V. Chromosome numbers on some common flowering plants. Current Sci. 28, 5, p. 206-207, 1959.
25. Tjio J.H. The somatic chromosomes of some tropical plants. Hedeartas. 34, 1-2, p. 135-146, 1948.
26. Tobe H., Raven P., Graham Sh. Chromosome counts for some Lythraceae sens. str. (Myrtles) and the base number of the family. Taxon., 35, 1, p. 13-20, 1986.
27. Xu, H.-Y., Chang M.-Y., Tian L.-C. Studies on the karyotypes of Shanghai plants I. Invest. Stud. Nat. – Shanghai. 12, p. 48-65, 1992.
28. Yasui K. Genetics and chromosome number in Punica. Japan J. Gen., 12, 6. p. 321-323, 1936.

Поступила 18.05.2017



Հայաստանի կենսաբ. հանդես, 4(69), 2017

ԿՈԿՈՇԵՆՈՒ ԵՎ ՀԱՂԱՐՁԵՆՈՒ ՄԵԱԿՈՎԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄՆԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Գ.Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Արցախի պետական համալսարան
gayanegeorgevna1981@mail.ru,

Արցախում կատարված հետազոտական աշխատանքների արդյունքում (2014-2017թթ.) հայտնաբերվել ու իդենտիֆիկացվել են կոկոշենին և հաղարջենին ախտահարող 8 տեսակի մնկային հիվանդություն /ալրացող, անտրակնոզ, սեպտորիոզ, ժանգաստունկ, մոխրագույն և մոնիլիային փտում, ասկոխիտոզ, թառամում/:

Պարզաբանվել են նշված մնկերի զարգացման կենսաբանական առանձնահատկությունները, տեր-բույսերի ընկալունակությունը հիվանդածին մնկերի նկատմամբ և հարմարվածությունն Արցախի բնակլիմայական պայմաններին:

Արցախ – տեր-բույս – մակաբույծ մնկեր – մնկային հիվանդություններ

В результате проведенных в 2014-2017 гг. в Арцахе работ выявлено и идентифицировано 8 видов грибных болезней, поражающих крыжовник и смородину (мучнистая роса, антракноз, септориоз, ржавчина, серая и монилиальная гниль, аскохитоз, увядание).

Выявлены биологические закономерности развития указанных грибов, восприимчивость растений-хозяев по отношению к грибам-паразитам и их адаптация к природно-климатическим условиям Арцаха.

Арцах – растение-хозяин – грибы-паразиты – грибные заболевания

In 2014-2017, as a result of the research in Artsakh eight fungal diseases on the currant and gooseberry were identified. They are powdery mildew, anthracnose, septoriose, rust fungi, gray and monilia rot, Ascochyta disease and wilting.

The article reveals the biological peculiarities of the development of the mentioned fungi, the perception of host-plants on the pathogenic mushrooms and the adaptation to the climatic conditions of Artsakh.

Artsakh – host plants – parasitic fungi – fungal diseases

Մնկերի աշխարհում միկրոմիցետներն իրենց կենսաբանական առանձնահատկություններով յուրահատուկ խումբ են կազմում: Այս մնկերի ուսումնասիրությունը խիստ անհրաժեշտ է, քանի որ լինելով մակաբույծներ, դրանք հեշտությամբ վարակում են բազմաթիվ վայրի և մշակովի բույսերի, նվազեցնելով բերքատվությունը, դեղագործական և դեկորատիվ նշանակությունը, սննդային որակը, կերային արժեքը և այլն [1]:

Քանի որ Արցախի բուսական աշխարհը և բնակլիմայական պայմանները բարենպաստ են մակաբույծ մի շարք մնկերի զարգացման համար անհրաժեշտություն առաջացավ ուսումնասիրել նշված տարածաշրջանի մշակովի բույսերն՝ այդ թվում թփերն ախտահարող մնկային հիվանդությունները:

Հոդվածում ներկայացվում են կոկոշենու և հաղարջենու վրա մակաբուծող, Արցախում հայտնաբերված մնկային հիվանդությունների վերաբերյալ որոշ տեղեկություններ:

Հարկ է նշել, որ կոկոռնեին և հաղարջենին հիմնականում վարակվում են նույն սնկային հիվանդություններով, բայց ի տարբերություն հաղարջենու՝ կոկոռնեու վրա որոշ սնկային հիվանդություններն ավելի արագ են տարածվում և ինտենսիվորեն զարգանում, իսկ առողջ պտուղների և բարձր բերքի ապահովման նպատակով խիստ կարևորվում է ճիշտ ժամանակին սնկային հիվանդությունների տարածումը և կանխումը:

Նյութ և մեթոդ: Հետազոտման նյութ են հանդիսացել կոկոռնեի և հաղարջենի տեր-բույսերը՝ վարակված տարբեր սնկային հիվանդություններով: 2014-2017 թթ. մեր կողմից Արցախում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և իդենտիֆիկացվել են նշված տեր-բույսերն ախտահարող 8 տեսակի սնկային հիվանդություն, որոնք իդենտիֆիկացվել են սնկաբանական համընդհանուր մեթոդներով, օգտագործվել են բազմաթիվ որոշիչներ: Սնկերի անվանումները համապատասխանացվել են ժամանակակից կարգաբանությանը [2-7]:

Արդյունքներ և քննարկում: Հետազոտման նյութ հանդիսացող կոկոռնեի և հաղարջենի տեր-բույսերն ընկալունակ են մի շարք սնկային հիվանդությունների նկատմամբ, ինչպիսիք են ալրացողը, սեպտորիոզը /սպիտակ բծավորություն/, անտրակնոզը, ժանգասունկը և այլն: Վերջիններիս զարգացումը ոչ միայն նվազեցնում է տեր-բույսերի բերքատվությունը և ազդում բերքի որակի վրա, այլ կարող է հանգեցնել բույսի մասնակի կամ լրիվ ոչնչացման: Մակաբույծ սնկերի տեսակային կազմի բացահայտումը կարևոր և որոշիչ նշանակություն ունի դրանց դեմ արդյունավետ, ճիշտ պայթար իրականացնելու հարցում: Հայտնաբերված սնկերի զարգացման առանձնահատկությունների պարզաբանումը հնարավորություն կտա կազմակերպել դրանց դեմ արդյունավետ պայթարն ինչպես տվյալ վեգետացիայում, այնպես էլ հետագա տարիներին: Ստորև ներկայացվում են հայտնաբերված սնկային հիվանդությունների մասին մանրամասն տեղեկությունները:

1.Ալրացող – *Podospheera mors-uvae* (Schwein.) U.Braun & S.Takam., ընտանիք *Erysiphaceae*: Սունկն ախտահարում է տեր-բույսի տերևները և պտուղները: Հիվանդության առաջին ախտանշաններն ի հայտ են գալիս զարնանը բույսի ծաղկումից անմիջապես հետո: Մատուցվող ընծյուղները և տերևները ծածկվում են սպիտակ, խիտ փառով, որը սկզբում հեշտությամբ պոկվում է: Այնուհետև հիվանդությունն արագ զարգանում է և տարածվում պտուղների, ինչպես նաև ամբողջ թփի վրա: Վարակված ընծյուղները ձևափախվում են, խանգարվում է դրանց նորմալ աճը, երբեմն դիտվում է ընծյուղների մասնակի չորացում: Ախտահարված պտուղներն ամբողջությամբ պատվում են սպիտակ փառով՝ սնկամարմնով, որի արդյունքում դադարում է պտուղների աճը: Նման դեպքերում պտուղները կորցնում են դեղագործական, սննդային, արտադրական նշանակությունը և ապրանքային արժեքը: Հաճախ վարակված պտուղները պատռվում են և թառամում: Սնկամարմինը լցված է կլետոտեցիումներով, որոնք ունեն պարզ հավելումներ և 1 պայուսակ՝ ասկ: Գարնանը պայուսակները բացվում են և ասկոսպորները դուրս են գալիս արտաքին միջավայր, տարածվում քամու միջոցով՝ առաջացնելով հիվանդության նոր օջախներ: Հիվանդության զարգացմանը նպաստում է խոնավ սուբստրատը և ստվերոտ տարածքը: Չոր և շոգ եղանակային պայմանները համեմատաբար ճնշում են հիվանդության զարգացման ընթացքը: Նկարագրվող սնկի սպորները երաշտադիմացկուն և ցրտադիմացկուն են: Այդ պատճառով անհրաժեշտ է ալրացողի դեմ պայթարը սկսել վաղ գարնանը և շարունակել մինչև ուշ աշուն: Հակառակ դեպքում վարակի կրկնման արդյունքում 2-3 տարուց հետո թփերը կարող են ամբողջությամբ ոչնչանալ: Սունկն Արցախում տարածված տեսակ է: Հայտնաբերվել է հետազոտության բոլոր տարիներին Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հադրութի շրջանների մի շարք համայնքներում և Ստեփանակերտ քաղաքում կոկոռնեու և հաղարջենու վրա:

2.Անտրակնոզ – *Drepanopeziza ribis* (Rehm ex Kleb.) Höhn., ընտ. *Dermateaceae*: Ոչ պակաս վնասաբեր սունկ է, քան ալրացողը: Ախտահարվում են հաղարջենու և կոկոռնեու տերևները, որոնց վրա առաջանում են մանր, դեպի դուրս փքված, անկանոն, դարչնագույն կամ մուգ գորշավուն բծեր: Հիվանդության ինտենսիվ զարգացման ժամանակ բծերը միախառնվում են, տերևները գորշանում և չորանում, տերևաթիթեղները կնճռոտվում են և տերևների եզրաշերտերը կծկվում են դեպի վեր: Ախտահարված տերևները ժամանակից շուտ թափվում են: Հիվանդության օջախներ կարող են հայտնաբերվել նաև տերևակոթոնների, կանաչ ընծյուղների և պտղակոթոնների վրա: Վերջիններիս վրա առաջանում են խոցեր: Հիվանդ տեր-բույսերի ընծյուղների աճը կտրուկ դանդաղում է, ինչը բացասաբար է անդրադառնում բերքատվության և պտուղների որակի /բաղցրության նվազում/ վրա: Անտրակնոզի զարգացմանը նպաստում են տևական անձրևները, խոնավությունը առկայությունը: Հիվանդությունը սովորաբար տարածվում է ամռան կեսերին կոնիդիումների միջոցով: Անտրակնոզի նկատմամբ առավել ընկալունակ են կարմիր

հաղարջենու սորտերը, համեմատաբար քիչ են ախտահարվում հաղարջենու սև ու սպիտակ սորտերը և կոկոռնենու թփերը:

Drepanopeziza ribis սևի գարգացումն ընթանում է երկու փուլով՝ կոնիդիալ և պայուսակավոր: Կոնիդիալ փուլը սկսվում է ամռանը և վեգետացիայի ընթացքում տալիս է մի քանի սերունդ: Կոնիդիալ սպորակրությունը դիտվում է տերևների և այլ ախտահարված օջախների վրա սպիտակավուն փայլուն բարձիկների առաջացմամբ: Կոնիդիումները միաբջիջ են և անգույն: Սունկը ձմեռում է հիվանդ և թափված տերևների կամ այլ բուսական մնացորդների վրա: Գարնանը ապոտեցիումի տեսքով զարգանում է սևիկ պարկավոր փուլը և ձևավորվում են ասկոսպորները: Վերջիններս հարուցում են անտրակնոզի առաջնային վարակ: Կրկնակի վարակն իրականացվում է կոնիդիումներով, որոնք առաջանում են ախտահարված տերևների էպիդերմիսի տակ տեղակայված սևկամարմնում: Կոնիդիումների հասունացման արդյունքում տերևների վերին մակերեսներին առաջանում են վերափոխման, որտեղ էպիդերմիսը կոնիդիումների ճնշմանը չդիմանալով պատռվում է: Պատռվածքներից դուրս թռած կոնիդիումները հաճախ անձրևի կաթիլի հետ միաձուլվելով ախտահարում են նոր օջախներ: Վեգետացիայի փուլում մասսայական վարակի առաջացման և տարածման մեջ հիմնական դերը կոնիդիումներինն է: Հիվանդության դեմ պայքարը նույնականացվում է այրացողի դեմ կազմակերպվող միջոցառումների հետ:

Նկարագրվող սունկն Արցախում տարածված տեսակ է: Հայտնաբերվել է հետազոտության բոլոր տարիներին, հիմնականում Ասկերանի և Մարտունու շրջանների մի շարք համայնքներում, ինչպես նաև Ստեփանակերտ քաղաքում հաղարջենու վրա: Հայտնաբերվել է նաև 2016թ. Ասկերանի շրջանի Ակնաղբյուր և Ավետարանց գյուղերում կոկոռնենու վրա:

3. Սեպտորիոզ կամ սպիտակ բծավորություն - *Mycosphaerella ribis* (Sacc.) Lindau, ընտ. *Mycosphaerellaceae*: Ախտահարումներն /բծերը/ առաջանում են տերևների, ընձուղների, երբեմն նաև պտուղների վրա: Բծավորությունը դրսևորվում է տերևների վրա կլորավուն կամ անկյունաձև դարչնագույն բծերի առաջացմամբ, որոնք հետագայում սպիտակում են և մնում դարչնագույն եզրագծերով: Հիվանդ տերևների զույգ մակերեսներին նկատվում են սև պիկնիդներ՝ պիկնոսպորներով: Սպորներն անգույն են և թելանման, որոնց միջոցով ամռանը վարակը տարածվում է: Հիվանդության ինտենսիվ դրսևորման արդյունքում հաղարջենու և կոկոռնենու տերևները ժամանակից շուտ թափվում են և ճնշվում է բույսի աճը: Սևիկ ինտենսիվ զարգացումը կարող է ուղեկցվել կոկոռնենու թփի մերկացումով: Վարակն ընձուղների վրա արտահայտվում է երկարավուն ձգված բծերի առաջացմամբ, որոնք կենտրոնում ունեն բաց գունավորություն և եզրագծված են մուգ շերտով: Ախտահարված ընձուղների թերաճի արդյունքում նվազում է բերքատվությունը և պտուղների ապրանքային արժեքը: Հիվանդ պտուղների վրա դիտվում են փոքր, հարթ, գորշ բծեր, որոնք հետագայում սպիտակում են: Սունկը ձմեռում է սեպտորիոզով հիվանդ բուսական մնացորդների վրա: Աշնանը տերևների ստորին մակերեսներին առաջանում են բազմաթիվ փոքր պտղամարմիններ՝ պսևդոտեցիումներ /զարգացման պարկավոր փուլ/, որտեղ հասկերում հատնանում են ասկոսպորները: Հիվանդության զարգացմանը նպաստում է խոնավ եղանակը, մեղմ ջերմաստիճանը և չորացող թփերը: Սեպտորիոզի մասսայական տարածում դիտվում է ամռան երկրորդ կեսին:

Սունկն Արցախում տարածված տեսակ է: Հայտնաբերվել է 2015-2016թթ. Ասկերանի, Մարտունու և Մարտակերտի, շրջանների մի շարք համայնքներում հաղարջենու և կոկոռնենու վրա:

4. Ժանգասունկ - *Puccinia ribesii-caricis* Kleb., ընտ. *Pucciniaceae*: Նկարագրվող սևիկ հարուցիչը կարող է ախտահարել տեր-բույսերի բոլոր օրգանները՝ տերևները, երիտասարդ չիվերը, ծաղիկները և պտուղները: Սևիկ ինտենսիվ զարգացումը նկատվում է բերքատվությունը և ազդում բույսի կենսագործունեության վրա:

Բույսի ախտահարված օջախներում ձևավորվում են նարնջագույն կամ դեղնագույն բծեր, որոնք առավել արտահայտված են լինում հիվանդ տերևների վրա: Վերջիններս վերին մակերեսին նկատվում է վառ գունավորությամբ օջախներ, որոնցում առկա են սև կետիկներ: Ախտահարված տերևների ստորին մակերեսներին տեղակայված են դեղին բարձիկներ՝ սևիկ սպորակրություններ, որոնք որոշ ժամանակ անց ստանում են փոքրիկ շիկների տեսք: Սևիկ զարգացմանը զուգընթաց փոխվում է ախտահարված օջախների գունավորությունը, այն դեղնավունից դառնում է դարչնագույն, այնուհետև գորշանում է, կենտրոնում ստանալով սպիտակավուն գունավորում: Ժանգասունկով հիվանդ տերևները ձևափոխվում են, ընձուղները՝ տերևազրկվում, ծամվում և չեն ձմեռում, իսկ պտուղների զարգացումն ախտահարված օջախում կողքային ճնշվում է: Միակողմանի զարգացման արդյունքում ձևավորվում են տձև պտուղներ, որոնց աճը դադարում է:

Ախտահարված օջախներում ձևավորվում են սնկի սպորները, որոնք տարածվելով առաջացնում են վարակի նոր օջախներ: Սպերմագոնիումները խմբերով են, տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, մեղրադեղնագույն են: Էցիդիումների կուտակումները համեմատաբար մեծ խմբերով են, որոնք տեղակայված են ցողունների, տերևների և հիմնական ջղերի վրա: Առաջացնում են կտրուկ արտահայտված ձևափոխություն: Էցիդիումները բաժանաման են, դեղին, պերիդիումի ետ ծաված սպիտակ ծայրով: Էցիդիոսպորները կլորավուն են կամ բազմանկյուն, բաց նարնջագույն, մանր փշիկապատ: Ուրեդինիումները տերևների ստորին մակերեսներին են, օվալաձև են, փքված, բաց գորշավուն, երկար ժամանակ մնում են էպիդերմիսով ծածկված: Տելիումները տեղակայված են տերևների ստորին մասում, մուգ դարչնագույն են: Տելիոսպորները սովորաբար քորոցանման են, բաց գորշավուն, թաղանթը հարթ է, ոտիկը ամուր և դեղնավուն: Արցախում հազվադեպ հանդիպող տեսակ է: Իդենտիֆիկացվել է 3 անգամ /10.06.2014թ., 5.06.2015թ., 24.05.2017թ./ Ասկերանի շրջանի որոշ համայնքներում:

5. Ասկոխիտոզ – *Ascochyta ribesia* Sacc. & Fautrey, ընտ. *Didymellaceae*: Ախտահարվում են տերևները, որոնց վրա զարգանում են գորշ, սպիտակավուն կամ գունատ դեղնագույն և գորշ եզրագծված բծեր, որոնց կենտրոնում հետագայում առաջանում են թեթև ծալքավոր օջախներ: Այդ օջախներում հյուսվածքները չորանալով ճաքճքում և պոկվում են: Բծերը կարող են լինել կլորավուն կամ անկյունաձև և անկանոն դասավորության: Վարակած հատվածների վրա կան սև պինկիղներ, որոնք փոքր են և գնդաձև: Կոնիդիակիրներն անգույն են և ունեն պարզ կառուցվածք: Կոնիդիումներն էլիպսոիդալ են կամ գլանաձև, թույլ դեղնականաչավուն, ունեն թույլ ձգվածքով միջնորմ, երկբջիջ են՝ ծայրերում կլորացած:

Նկարագրված սնկով ավելի հաճախ ախտահարվում են կարմիր հաղարջի թփերը: Հիվանդության ինտենսիվ զարգացում է դիտվում ամռան կեսերին և շարունակվում է մինչև ուշ աշուն: Սունկը ձմեռում է ախտահարված բուսական մնացորդների վրա պինկիղների և պինկոսպորների տեսքով: Հիվանդության զարգացմանը նպաստում է բարձր խոնավությունը և տեր-բույսերի թույլ կենսագործունեությունը: Ասկոխիտոզի ինտենսիվ արտահայտվածությունն առաջացնում է հիվանդ բույսերի վաղաժամ տերևաթափ: Հիվանդությունն առաջին տարում բերքատվության վրա արտահայտված բացասական ազդեցություն չի թողնում, սակայն տարեց տարի կրկնվելով, նվազեցնում է բույսի կենսագործունեությունը, հետևաբար նաև բերքատվությունը: Սունկն Արցախում հայտնաբերվել է հետազոտության բոլոր տարիներին Ասկերանի և Մարտունու շրջանների մի շարք համայնքներում կոկոռչենու և հաղարջենու վրա:

6. Մոխրագույն բորբոսանման փտում – *Botrytis cinerea* Pers., ընտ. *Sclerotiniaceae*: *Botrytis cinerea* սնկով հիմնականում ախտահարվում են պտուղները դաշտում և պահպանման ժամանակ: Նկարագրվող սնկի վարակը դիտվել է ինչպես տեր-բույսի վեգետացիայի փուլում, այնպես էլ բերքի հավաքման, տեղափոխման և պահպանման ժամանակ: Ախտահարված պտղաթաղանթը հաճախ պատռվում է: Պտղափափկների վարակը հիմնականում սկսվում է պտղի և կոթունի ամրացման հատվածից կամ մեխանիկական վնասվածքով օջախից:

Հիվանդ պտուղները հարուցիչի թափանցման պահից սկսած արագ փափկում և ծածկվում են մոխրագույն փառով՝ սնկի կոնիդիալ սպորակրությամբ: Կոնիդիակիրներն ունեն վրձնանման ճյուղավորում, որոնց զազաթին առաջանում են կոնիդիում ներք /սպորներ/: Սպորները միաբջիջ են, անգույն և օվալաձև, երբեմն ձևավորում են սև կամ գորշ սկլերոցիումներ: Մեխանիկական վնասվածքներով, թույլ կենսագործունեությամբ և գերհասուն պտուղներն ավելի ընկալունակ են նկարագրվող սնկի նկատմամբ: Տաք և սառը ջերմաստիճանների անկանոն հերթափոխը համարվում է սնկի զարգացման հիմնական պատճառը: Սունկը տարածված տեսակ է, հայտնաբերվել է ուսումնասիրության բոլոր տարիներին Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի որոշ համայնքներում և Ստեփանա-կերտ քաղաքի պտուղ-բանջարեղենների վաճառակետերում:

7. Վերտիցիլիոզային թառամում – *Verticillium dahliae* Kleb., ընտ. *Plectosphaerellaceae*: Հիվանդությունը հանդիպել է ավելի շատ հաղարջենու, քան կոկոռչենու վրա: Ախտահարված թփերի աճը նկատելի տարբերվում էր առողջ բույսերից, վարակված տերևները գունատվում են, աստիճանաբար թառամում և երկար ժամանակ մնում են շիվերին կպած: Սկզբում թառամում են ստորին տերևները, այնուհետև վարակը տարածվում է երիտասարդ շիվերի վրա: Վարակվում են նաև պտուղները, որոնք թառամում և մնում են շիվերին կպած: Հիվանդության 2-3 տարի կրկնվելը հանգեցնում է բույսի ոչնչացման: *Verticillium dahliae* Kleb. սնկին բնորոշ հատկանիշ է տեր-բույսի հյուսվածքների գորշացումը: Ախտահարված շիվերի լայնակի կտրվածքում տեսանելի են բնափայտի նեկրոտիկ օջախներ՝ առանձին կետերի կամ ամբողջական օղակի տեսքով: Նկարագրվող սնկի հարուցիչը թափանցում է

տեր-բույսի հյուսվածքներն արմատների միջոցով: Վարակված բույսերը մահանում են, բաժնի որ հարուցիչի կողմից արտադրվում են թուլներ, որոնք խիստ բացասաբար են ազդում բույսի կենսագործունեության վրա: Բույսի սննդային նյութերի տեղաշարժը դեպի մատղաշ շիվեր դադարում է, որի արդյունքում առաջանում է բաղց և սով, արդյունքում վեգետատիվ ընձյուղները խեղդվում են, իսկ արմատային համակարգն աստիճանաբար գորշանում և չորանում է: Նկարագրվող սունկն ունի լայն ֆիլոգենետիկ մասնագիտացում և բացի հատապտղայիններից կարող է ախտահարել նաև պտուղ բանջարեղենային այլ մշակաբույսեր: Այդ բույսերի վարակված մնացորդների վրա սնկի հարուցիչը ձմեռում է միկրոսկլերոցիումների տեսքով և կարող է իր կենսունակությունը պահպանել 8-10 տարի: Միկրոսկլերոցիումներն աճելով առաջացնում են սևկամարմին, որը վարակում է տեր-բույսը՝ թափանցելով երիտասարդ արմատների մեջ: Սնկի ինտենսիվ արտահայտվածության դեպքում կարող է ոչնչանալ բույսի վերգետնյա զանգվածի 20-30 տոկոսը: Սունկը տարածված տեսակ է, հայտնաբերվել է հաղարջենու վրա ուսումնասիրության բոլոր տարիներին Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի որոշ համայնքներում, իսկ կոկոռչենու վրա հայտնաբերվել է 2015 թ. և 2017 թ. ամռան կեսերին՝ Ասկերանի շրջանի որոշ համայնքներում:

8. Սոնիլային փտում – *Monilinia laxa* (Aderh. & Ruhland) Honey, ընտ. *Sclerotiniaceae*: Ախտահարվում են պտուղները: Հիվանդ հատապտուղները գունատվում և թորչում են: Պտղաթաղանթը ճեղքվում է և ձևավորվում են բաց մոխրագույն բարձիկներ՝ սնկի սպորակրություններ: Սևկամարմինը թափանցում է պտղամսի մեջ և ժամանակի ընթացքում ախտահարված պտուղները չորանում են, մումիֆիկացվում և հիմնականում մնում են ճյուղերից կախված, իսկ որոշները կարող են նաև թափվել: Սոնիլային փտում սնկային հիվանդությունն ինտենսիվ տարածման արդյունքում կարող է հանգեցնել բերքի մասնակի կորուստի: Սնկի զարգացմանը նպաստում են տևական անձրևները և օդի բարձր խոնավությունը: Նկարագրվող հիվանդության վնասաբերությունն Արցախում զգալի է: Այն հայտնաբերվել է ուսումնասիրության բոլոր տարիներին Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի շրջանների մի շարք գյուղերում և հիվանդությունը մասսայական բնույթ էր կրում:

Այսպիսով, չորսամյա հետազոտությունների ընթացքում հայտնաբերվել և պարզաբանվել է կոկոռչենու ու հաղարջենու վրա իդենտիֆիկացված մակաբույծ սնկերի զարգացման կենսաբանական առանձնահատկությունները, արտաքին գործոնների ազդեցությունը դրանց վրա, տեր-բույսերի ընկալունակությունը հիվանդածին սնկերի նկատմամբ և հարմարվածությունն Արցախի բնակլիմայական պայմաններին:

Հարկ է նշել, որ կոկոռչենու և հաղարջենու աճեցման, որակյալ ու բարձր բերք ստանալու, ինչպես նաև նկարագրված սնկային հիվանդությունների դեմ պայքարելու համար անհրաժեշտ է ոչ միայն մշակել ու բազմացնել թփերը, այլ նաև հատուկ խնամք իրականացնել, որն անպայման պետք է զուգակցվի ագրոտեխնիկական, կենսաբանական և քիմիական պայքարի մեթոդների կիրառմամբ:

Հետազոտությունն իրականացվել է ԱՀ ԿԳՍ Նախարարության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ №ՏՀՏ 15.10-003 «Մշակովի բույսերի սնկային հիվանդությունների ուսումնասիրությունը Լեռնային Ղարաբաղի տարածքում» գիտական թեմայի շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արախամյան Ջ.Հ., Նանգոյան Ս.Գ., Ամիրյան Ա.Ա. Ֆիտոպաթոլոգիա. Երևան, 58 էջ, 2004.
2. Дьяков Ю.Т., Еланский С.Н. Общая фитопатология. М.: Издательство Юрайт, с.230, 2016.
3. Маркарян Г.Г., Нанагюлян С.Г., Согоян Е.Ю. Ржавчинные грибы полезных растений Нагорного Карабаха. Современная микология в России, М., 7, с. 74-75, 2017.
4. Попкова К.В. Общая фитопатология. М.: Дрофа. - 2005. - 445с.
5. Рахимова Е.В., Нам Г.А., Ермекова Б.Д. Краткий иллюстрированный определитель мучнисторосяных грибов Казахстана и приграничных территорий. Новосибирск, 129 с., 2014.
6. Mueller G.M., Bills G.F., Foster M.S. Biodiversity of fungi. London: Elsevier Academic press. 777 p., 2004.
7. <http://www.indexfungorum.org/names/Names.asp>

Ստացվել է 29.06.2017



Biol. Journal of Armenia, 4 (69), 2017

INTERACTION OF MESO-TETRA-(4N-ALLYLPYRIDYL) PORPHYRIN AND ITS Cu-, Co- AND Zn- CONTAINING DERIVATIVES WITH DNA

V.G. BARKHUDARYAN*, G.V. ANANYAN

Department of Molecular Physics, Yerevan State University,
Vbarkhudaryan@gmail.com

The influence of water soluble cationic meso-tetra-(4N-allylpyridyl) porphyrin ($H_2TAIPyP4$) and its metal complexes with Cu-, Co- and Zn- on hydrodynamic and spectral behaviour of ct-DNA solutions has been studied by viscometry and UV-VIS spectrophotometry methods. The results obtained were compared with the results of previously conducted similar studies on meso-tetra-(3N-allylpyridyl) porphyrin ($H_2TAIPyP3$). It has been shown that the change in position of peripheral radicals on pyridylic ring has absolutely no effect on rules of interaction of investigated porphyrins with DNA in case of outside binders $CoTAIPyP4$ and $ZnTAIPyP4$. Planar porphyrin $H_2TAIPyP4$ interacts with DNA predominantly by intercalation mode at low relative concentrations of r ($r = [Porphyrin] / [DNA]$) and by external binding mode at high values of r . Unusual behaviour shows $CuTAIPyP4$, which interacts with DNA via non-classical (partial) binding mode. It was shown that $H_2TAIPyP3$ and its metal complexes bind to DNA much more intensely than $H_2TAIPyP4$ and its metal complexes.

Porphyrin – ct-DNA – Viscometry – intercalation – outside binding – partial intercalation

Մածուցիկաչափության և սպեկտրոֆոտոմետրիայի մեթոդներով հետազոտվել է ջրալուծ կատիոնային մեզո-տետրա-(4N-ալիլպիրիդիլ) պորֆիրինի ($H_2TAIPyP4$) և Cu-ի, Co-ի և Zn-ի հետ նրա համալիրների ազդեցությունը ՂՆԹ-ի լուծույթների հիդրոդինամիկական և սպեկտրալ հատկությունների վրա: Ստացված արդյունքները համեմատվել են մեզո-տետրա-(3N-ալիլպիրիդիլ) պորֆիրինի ($H_2TAIPyP3$) հետ նախկինում իրականացված նմանատիպ հետազոտությունների արդյունքների հետ: Ցույց է տրվել, որ պիրիդիլային օղակում կողմնային ռադիկալների դիրքի փոփոխությունը բացարձակապես չի ազդում հետազոտվող պորֆիրինների՝ ՂՆԹ-ի հետ փոխազդեցության օրինաչափությունների վրա արտաքինից կապվող $CoTAIPyP4$ -ի և $ZnTAIPyP4$ -ի դեպքում: Հարթ կառուցվածքով $H_2TAIPyP4$ -պորֆիրինը ՂՆԹ-ի հետ առավելապես փոխազդում է ինտերկալման վարքագծով ցածր r ($r = [Porphyrin] / [DNA]$) հարաբերական կոնցենտրացիաների և արտաքին կապումով՝ մեծ կոնցենտրացիաների դեպքում: Անսովոր վարքագիծ է դրսևորում $CuTAIPyP4$ -ը, որը ՂՆԹ-ի հետ փոխազդում է ոչ դասական (մասնակի) կապման ռեժիմով: Ցույց է տրվել, որ $H_2TAIPyP3$ -ը և նրա մետաղակոմպլեքսները ՂՆԹ-ի հետ ավելի ինտենսիվ են փոխազդում, քան $H_2TAIPyP4$ -ը և նրա մետաղակոմպլեքսները:

Պորֆիրին – ՂՆԹ, մածուցիկաչափություն – ինտերկալում – արտաքին կապում – մասնակի ինտերկալում

Методами вискозиметрии и спектрофотометрии изучено влияние водорастворимого катионного мезо-тетра-(4N-аллилпиридил) порфирина ($H_2TAIPyP4$) и его комплексов с Cu-, Co- и Zn- на гидродинамическое и спектральное поведение растворов ДНК. Полученные результаты сравнивались с результатами ранее проведенных аналогичных исследований мезо-тетра-(3N-аллилпиридил) порфирина ($H_2TAIPyP3$).

Показано, что изменение положения периферических радикалов на пиридиловом кольце абсолютно не влияет на закономерности взаимодействия исследованных порфиринов с ДНК в случае внешних связующих CoTAIPyP4 и ZnTAIPyP4. Планарный порфирин H₂TAIPyP4 взаимодействует с ДНК преимущественно интеркаляционным режимом при низких относительных концентрациях r ($r = [Porphyrin] / [DNA]$) и внешним режимом связывания при высоких значениях r . Необычное поведение проявляет CuTAIPyP4, который взаимодействует с ДНК по неклассическому (частичному) режиму связывания. Было показано, что H₂TAIPyP3 и его металлокомплексы связываются с ДНК намного интенсивнее, чем H₂TAIPyP4 и его металлокомплексы.

Порфирин – тт-ДНК – вискозиметрия – интеркаляция – внешнее связывание – частичная интеркаляция

